

# ՄԱՐԳԻՆՅ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1975 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 2 ՄԱՐՏ 2015  
• VOL. XXXVI, NO 1975 • LUNDI, 2 MARS 2015 • MONDAY, MARCH 2, 2015

1915-2015  
ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
100-ՐԴ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

## «Չաման» կը յայտնէ Ապրիլ 24-ի Կալիփոլի տօնակատարութեան ջնջումը, իսկ «Սապահ» կը հերքէ զայն

**Եթէ հաստատուի ջնջումի լուրը, Հարիւրամեակի հայկական առաջին յաղթանակը պիտի հանդիսանայ ան Թուրքիոյ դէմ**

Թուրքիոյ «Չաման» օրաթերթի անգլերէն հրատարակութիւնը՝ «Sunday Zaman», իր Կիրակի 21 Փետրուարի թիւին մէջ կը յայտնէր, թէ Անգարայէն պետական բարձրաստիճան անձնաւորութեան մը կողմէ փոխանցուած լուրի մը համաձայն, կառավարութիւնը ջնջած է Կալիփոլի (Չանաքքալէ) ճակատամարտի տարեդարձի 24 Ապրիլին համար ծրագրուած հանդիսութիւնը, որովհետեւ աշխարհի պետութիւններու ղեկավարներուն ուղղուած աւելի քան հարիւր հրաւերներէն հազիւ հինգ դրական պատասխաններ ստացուած է, այն ալ՝ ցած մակարդակի ներկայացուցիչներէ: Այս լուրը փոխանցող անձը չէ ուզած որ իր անունը յայտնուի:

Մինչ հայկական շրջանակներու եւ միջազգային մակարդակով այս լուրը ընդունուած էր խոր հետաքրքրութեամբ, յաջորդ օրը Թուրքիոյ «Սապահ» թերթը կը յայտնէր, թէ «կառավարութեան մօտիկ շրջանակէ» հերքուած է այդ լուրը, թէեւ այս հերքումը կատարողներ եւս իրենց ինքնութիւնը չեն ուզած յայտնել եւ մերժած են պատասխանել թէ քանի հրաւիրեալներէ պատասխան ստացուած է:

Մինչեւ մեր թերթի տպարան յանձնումը, այս հարցը կը մնար խորհրդաւոր անորոշութեան մէջ: Վստահաբար կայ ներքին կնճռոտ կացութիւն մը, որ երկու կողմերու ներկայացուցիչներ կը պնդեն անյայտ մնալ:

## Սարգսեան եւ Ծառուկեան հանդիպումը մեղմացուց Հայաստանի մէջ լարուած մթնոլորտը

**«Բարգաւաճ Հայաստան» նոր ղեկավար կը փնտռէ**

Փետրուար 17-ին անակնկալ կերպով յայտարարուեցաւ թէ Հանրապետական կուսակցութեան ղեկավար եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան ու «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեան հանդիպում մը ունեցած են միջնորդութեամբ ԶՅԴ-եան, որպէսզի արդէն իսկ երկրին մէջ տիրող լարուած քաղաքական վիճակը աւելի չբարդանայ եւ երկիրը խոր ցնցումներու չ'ենթարկուի:

Հանրապետական կուսակցութեան պարագլուխներէն եւ Ազգային ժողովի պետաիրաւական հարցերու յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Սահակեան, պատասխանելով լրագրողի հարցումներուն, ըսած է՝ «Հանրապետականը քաղաքականութեան մէջ չի բացառում ոչինչ, անգամ 'Բարգաւաճ Հայաստան'ի հետ համագործակցութեան եզրեր գտնելու համար»:


Իր կարգին, Գագիկ Ծառուկեան Փետրուար 18-ին յայտարարութիւն մը կատարած է ուր կ'ըսէ՝ «Ինչպէս ես բազմիցս ասել եմ, մեր բոլորի, եւ անձամբ իմ խնդիրը եւս միշտ տեսել եմ մեր ժողովրդին, մեր երկրին օգտակար լինելու մէջ: Հայաստանում առկայ խնդիրները լուծելու համար մեզ անհրաժեշտ է ոչ թէ պատերազմել միմեանց դէմ, այլ հանգիստ, առանց միմեանց վիրաւորելու աշխատել, ցոյց տալ առկայ բոլոր բացերը, գտնել լուծումներ եւ կեանքի կոչել



դրանք: Բոլոր խնդիրները պետք է լուծուեն խաղաղ, օրինական, քաղաքական ճանապարհով»:

Երկու օր ետք նոր անակնկալ մը յայտնուեցաւ երբ «Հայկական ժամանակ» օրաթերթը հրատարակեց թէ «Բարգաւաճ Հայաստան» ընդդիմադիր կուսակցութիւնը նոր առաջնորդի որոնման ձեռնարկած է: Կուսակցութեան նախագահի ամենէն հաւանական թեկնածուներէն կը համարուին Ազգային ժողովի անդամ Ստեփան Մարգարեանը եւ վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Չաբարեանը: Այդպէս, որ թերթը նոյն առումով գրած է, թէ ՀՀ իշխանութիւններուն համար անհանդուրժելի են Վարդան Օսկանեանի եւ Նայիրա Չոհրապեանի անունները:

## ՀԱԼԵՂԻ ՊԸՍԹԱՆ ԳԸԼԱՓԻ ԾՐՋԱՆԸ ՀՐԹԻՌԱԿՈՇՄԱՆ ԹԻՐԱՆ ԴԱՐՁԱՒ. ԿԱՆ ՀԱՅ ՉՈՐՅԵՐ ԵՒ ՎԻՐԱԿՈՐՆԵՐ



Շաբաթ՝ 21 Փետրուար 2015-ին, Հալէպ քաղաքի կեդրոնը գտնուող ՊԸՍԹԱՆ ԳԸԼԱՓԻ վաճառախանութիւններու շրջանը զինեալ ահաբեկչական խմբաւորումներու կողմէ հրթիռակրծման թիրախ դարձաւ: Յատկապէս «Սանոսեաններու կառատունի տարածքը» դարձաւ հրթիռակրծման պայթումի թատերաբեմը: Պայթումի հետեւանքով զոհուեցան 1970-ի ծնունդ Սազօ Գարակիլլեանն ու 1981-ի ծնունդ Յարութ Ազանեանը, իսկ վիրաւորներու կարգին կան նաեւ հայեր՝ Լեւոն Բարսեղեանը, Նազօ Ազանեանը, Յովսէփ Չալոյեանը, Աօ Չարմինեանը եւ Ժագ Ասլանեանը:

Պետք է յիշել, որ պայթումները նիւթական ծանր վնասներ պատճառեցին շրջանի ինքնաշարժներուն եւ խանութներուն: Յայտնեմք նաեւ, որ ՊԸՍԹԱՆ ԳԸԼԱՓԻ շրջանի վաճառախանութիւններէն շատերը կը պատկանին հայերու:

## Եգիպտական պարբերականին անդրադարձը Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախաձեռնութիւններուն

Եգիպտական «Ալ Ուաթան Նիուզ» («Al Watan News») կայքը կը հաղորդէ, որ դոկտ. Արմէն Մազլումեանը՝ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրած ձեռնարկները համակարգող պետական յանձնաժողովի Եգիպտոսի կեդրոնական մարմինի անդամը, ըսած է, որ ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած ձեռնարկները համակարգող յանձնախումբը, խորհրդակցելով տարածաշրջանային յանձնաժողովներուն հետ, հրապարակած է հռչակագիր մը համայն հայութեան կողմէ, Օգոստոս 23, 1990-ին Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան հռչակագրի եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան հիման վրայ, վկայակոչելով Մարդու իրաւունքներու կազմակերպութեան, հաստատուած ՄԱԿ-ի մէջ Դեկտեմբեր 10, 1948-ին, կ'ընդունի, որ մարդկային ընտանիքի բոլոր անդամները ունին իրենց ազգային արժանապատուութիւնը եւ հաւասար ամբարձրուած իրաւունքներ, որ կը համարուի ազատութեան եւ արդարութեան հիմքը աշխարհի մէջ:



Ան աւելցուցած է, որ ըստ յանձնաժողովին կողմէ եղած յայտարարութեան, Շաբ. էջ 12

# Եկեղեցին օրինակելիորեն թափանցիկ պետք է գործի

## ՅԱԿՈՔ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Իրաւ կամ շինծու սկանտալներ էին պետք, որպէսզի Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռը մի փոքր բաց աներ վարագոյրը իր ֆինանսական գործառնութիւնների վրայից, աշից-ծախից ցեխարծակումներ որպէսզի Մայր Աթոռի ներկայացուցիչները հանրութեանը բացատրութիւններ տային սոցիալական-կրթական-առողջապահական այն հսկայածաւալ գործունեութեան վերաբերեալ, որը տարուում է Հայ եկեղեցու կողմից կամ հովանու ներքոյ:

Աստուածաշնչեան պատգամը՝ «ծախ ձեռքը թող չիմանայ աջն ինչ է անում», այս պարագայում եւ այս օրերին կիրառելի չէ, յատկապէս մեր՝ յետսովետական պայմաններում, յատկապէս մեր՝ գրպարտող-բամբասող լրատուամիջոցների միջավայրում, եւ մանաւանդ՝ ամեն բանի նկատմամբ հաւատը կորցրած մեր հասարակութեան մէջ:

Չորեքշաբթի օրը Արմէնփրեսի սրահում Մայր Աթոռի ներկայացուցիչների ասուլիսը թէեւ ոչ սպառնիչ, սակայն որոշակի լոյս սփռեց հետաքննող լրագրողների միջազգային քննորոգիումի կողմից շուեցարական HSBC պանքի ցուցակներից «գաղտնագործուած» Ամենայն Հայոց Կաթողիկոսի «անձնական» հաշուեհամարի «յայտնագործման» առիթով Հայաստանում բարձրացւած աղմուկը մեղմելու, խռովեալ մտքերն ու վառուող երեւակայութիւնները հանդարտեցնելու տեսակետից:

Երբեքն ասած՝ առաջին պահից ինձ յուսախաբ արեց Հայ եկեղեցու գերագոյն պետի հաշուեհամարում այրչափ փոքր գումարի առկայութիւնը: Մեր նորահարուստներից իւրաքանչիւրը առնուազն դրա եռապատիկը ունի: Իսկ Մայր Աթոռին ենթակայ թեմակալ առաջնորդներից ոմանք, յատկապէս Մ. Նահանգնե-

րում, դրա տասնապատիկը, նոյնիսկ հարիւրապատիկը ունեն տարբեր պանքերում, առանձ ստանձնելու ազգային, կրթական, բարեգործական կամ սոցիալական որեւէ նշանակալից դեր: Այնինչ Մայր Աթոռը կամովին կամ պայմանների թելադրանքով ազգային բազմապիսի ու բազմաբնոյթ հոգսեր է վերցրել իր վրայ, որոնց համար, գումարած իր բազմանդամ պաշտօնեութեան ու ուսանողութեան ծախսերը, նրա եկամուտի հիմնական աղբիւրը հանդիսանում է մոմավաճառութիւնը, որը, իմ ունեցած տուեալներով, ընդամենը 17 տոկոսն է կազմում նրա պիւտճէի:

Մնացեալը, ինչպէս ասում են ողջ մասն Մայր Աթոռի բարերարները, որոնք ոչ միայն լրացնում են պիւտճէի մնացած կամ հիմնական մասը, այլեւ նորանոր նուիրատուութիւններով սատարում կառուցապատման այն տպաւորիչ ծրագրերին, որոնց ձեռնարկել է Հայոց Հայրապետը 15 տարուց ի վեր: Ինչպէս ասում են՝ մեծահարուստ նուիրատուն կամ բարերարը բոլորից լաւ գիտի ո՛ւմ վստահել եւ ի՛նչ վստահել: Վստահաբար նրանց վրայ չեն ազդել ու ոչ մի միջազգային կամ տեղական հետաքննող լրագրողի «գաղտնագործում», «քողագործում» կամ «յայտնագործում»:

Այսուհանդերձ, մեր հասարակութիւնը կարիք ունի պարբերաբար եւ հորիզոնական հետեւողականութեամբ տեղեակ պահուելու մեր ազգային եկեղեցու ողջ գործունեութեան եւ ֆինանսական գործառնութիւնների ողջ համապատկերի մասին: Միայն թափանցիկութիւնը կարող է կանխել արտաքին ու ներքին չարաշահումները եւ օրինակ հանդիսանալ այլոց:

Եւ վերջում մէկ խորհուրդ՝ Մայր Աթոռը պետք է դատի տայ հետաքննող լրագրողների միջազգային քննորոգիումին լրագրողական ոչ փրոֆեսիոնալութեան համար:

«ԱԶԳ»

# Ամենայն Հայոց Կաթողիկոսին անունը՝ HSBC-ի հաշիւներու ցանկին մէջ

## Մայր Աթոռ կը բացատրէ, որ տարօրինակ ոչինչ կայ

«Հետաքննող լրագրողներու միջազգային ընկերակցութիւն»ը յայտնաբերած է բրիտանական HSBC դրամատան կողմէ Չուիցերիոյ մէջ բացուած հաշիւներու տեքստը ցանկերը: Ֆրանսական «Լը Մոնտ» թերթը Փետրուար 8-ին բացայայտեց լուրը: Նման հաշիւներ բանալով՝ յաճախորդներու հետապնդած նպատակը եղած է իրենց գումարները գերծ պահել իրենց բնակութեան երկրի տուրքերէն, ինչ որ բնականաբար ապօրինի է:

Հրապարակուած ցանկին մէջ աշխարհի բոլոր երկիրներէն կան հազարաւոր անուններ, որոնց մէջ արուեստագետներ, պետական ղեկավարներ, բայց նաեւ ոճրային աշխարհի անդամներ: Հայաստանէն ալ կան անուններ: Կարելոր հաշիւ ունեցողներու կարգին կը յիշուի

Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին անունը, որ դրամատան փաստաթուղթերուն մէջ կ'երեւի 2000 թուականէն սկսեալ: Այդ հաշիւը 2006-2007 թուականներուն կազմած է 1,1 միլիոն տոլար:

Այս հրապարակումէն անմիջապէս վերջ, «Արմէնփրես» լրատու գործակալութիւնը բացատրութիւններ խնդրած է Ամենայն Հայոց Կաթողիկոսի մամուլ բանբեր Վահրամ Զինյ. Մելիքեանէն: Ան յայտնած է, որ այս հրապարակումին մէջ տարօրինակ եւ զարհուրելի բան չկայ, Մայր Աթոռի հաշիւները այդ դրամատան մէջ միշտ արձանագրուած են կաթողիկոսներուն անունով: Մայր Աթոռը արդէն անմիջապէս գրաւոր բացատրութիւններ տուած է «Հետաքննող լրագրողներու ընկերակցութեան» եւ բացատրած

է, որ Մայր Աթոռի գումարները այսպէս կը պահուին Վազգէն Ա. եւ Գարեգին Ա. Կաթողիկոսներու օրերէն ի վեր: Ամեն անգամ որ կաթողիկոսներէն մէկը կը վախճանի, անոր անունով բացուած հաշիւը կը փոխանցուի յաջորդ կաթողիկոսին անունին: Ուստի վերի յայտնաբերումին մէջ արտակարգ եւ կասկածելի երեւոյթ չկայ, բացատրած է Մելիքեան Զինյ.: Մնաց որ, Մայր Աթոռի գահակալը գերծ է հարկային պարտադրութիւններէ եւ այդ տեսակետէն ալ ծուռ բան չկայ Չուիցերիոյ դրամատան մէջ պահուած գումարին առնչութեամբ:

Հայաստանէն զանազան անձերու կարգին, ամենէն կարելոր հաշիւը կը պատկանի մէկու մը, որ ունեցած է 5,8 միլիոն տոլար:

«Նոր Յաւաց»

# Վիքթորիա Նուրնտ Ծիծեռնակաբերդ այցելեց

Տարածաշրջանային այցով Երեւան գտնուող ԱՄՆ պետական քարտուղարի՝ Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով օգնական Վիքթորիա Նուրնտ 18 Փետրուար 2015-ին, այցելած է Ծիծեռնակաբերդի յուշահամալիր: Ան ծաղիկներ դրած է Յեղասպանութեան զոհերու յուշահամալիրի մէջ: Այս մասին կը տեղեկացնէ Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանատան թուրքերէն էջը:

Նուրնտ այս այցի ընթացքին հանդիպումներ պիտի ունենայ Հայաստանի բարձրաստիճան պաշտօնեաներու, քաղաքացիական հասարակութեան եւ երիտասարդական խումբերու հետ: Մինչ Հայաստան ժամանելը, ան այցելած է Ատրըպէյճան եւ Վրաստան:



Հեռախօսային արձանագրութիւններ կ'ապացուցեն Թուրքիոյ մեղսակցութիւնը Զեսապի վրայ յարձակումին

Վերջերս Թուրքիոյ մէջ Խւլամական Խալիֆայութեան զինեալներու դէմ դատավարութեան ընթացքին ներկայացւած ապացոյցներու շարքին, բացայայտուած են հեռախօսային արձանագրութիւններ, որոնք յստակ կը դարձնեն Թուրքիոյ զինեալ ուժերու մասնակցութիւնը Զեսապի վրայ շղթայագերծուած յարձակումին:

Սոյն արձանագրութիւններէն ի յայտ կու գայ, որ Թուրքիա ոչ միայն զէնք եւ զինամթերք մատակարարելով օգնած է Խւլամ ծայրայեղականներուն, այլեւ ուղղակի թնդանօթներով հարկածած է Զեսապի վրայ յարձակողներու մատնանշած սուրիական բանակի տեղերը նշող թիրախներ:

Դատական արձանագրութիւնները ձեռք ձգած է «Ճում-հուրիէթ» թերթի լրագրող Ահմետ Սիքը:



Շարքաբերք

# ABAKA

Hebdomadaire Arménien  
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by  
Le Centre de Publication Tékéyan  
825 rue Manogian, Saint-Laurent,  
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162  
e-mail: abaka@bellnet.ca  
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝  
ԱՒԵՏԻՍ ՊԱԳՉԱԼԵԱՆ

Ծանուցումներու,  
նուիրատուութիւններու եւ  
գրասենեակի պատասխանատու՝  
ՍԱԼԻՒ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝  
ՄԱՍԿԹ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ


Canada  
2nd Class \$80 (QC & ON)  
1ère classe/first class \$90  
U.S.A. 1st class (US)\$90  
Autres pays/Other countries:  
1st class (US)\$120  
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”



# Մուլիեռի «Երեւակայկան Յիւանդ»-ը բեմադրուեցաւ Օթթաուայի եւ Թորոնթոյի մէջ



Թորոնթոյի ԶԲԸՄի հրաւերով 3այ Բեմ Թատրախումբը 14,15 Փետրուար շաբաթավերջին Օթթաուայ-ի ելոյթէն յետոյ ամսոյն 15-ին ունեցաւ «Երեւակայկան Յիւանդ»-ի 2-րդ բեմադրութիւնը:

Խումբը առաւօտեան ժամը 4:15-ին հասնելէ յետոյ մի քիչ հանգստացաւ ու ապա ուղղուեցաւ պանդոկէն ոչ շատ հեռու գտնուող ԶԲԸՄի Կեդրոնը:

Բոլոր խումբը, օգնութեամբ հիւրընկալ միութեան կամաւորներուն կարողացան ամբողջացնել բեմի դասաւորման, լուսաւորման ու ձայնային կարգադրութիւնները պատրաստ ըլլալով երեկոյեան 6:30ին բեմադրութիւն:

Պոչաւոր դաշնամուրի ասեղնաշարերը թնդացին Արտէն Արապեանի մատներու հմուտ հարւածներով: Դաշնամուրին հնչիւններուն հետ 11 միւս դերակատարներն ալ բացառիկ յաջողութեամբ մարմնաւորեցին իրենց դերերը:

Բեմադրիչ Նանսի Թորոնթեանի ցուցմունքնե-

րու եւ իր քրտնաջան աշխատանքի արդիւնքը այն եղաւ, որ այս բեմադրութեան 6-րդ ելոյթն ալ եղաւ նախանցեալներուն նման յաջող:

Բացառիկ ցուրտը սակայն պատճառ դարձաւ բացակայութիւններու, նոյնիսկ տոմսեր գնողներ չհանդուրժեցին իրենց տունները թողնել ներկայացման ներկայ գտնուելու համար, դուրսը սաստիկ ցուրտ էր, սակայն ներսը տաք էր ու խնդութով լեցուն:

Յոտնկայս ծափահարութիւններ, ծաղկեփունջեր...

Տիկ. Պասմաճեան (ԶԲԸՄի ատենապետուհի) եւ Ա. Մանուկեանի Մոնթրէալ ԹՄՄի ատենապետի խօսքերով ակարտեցաւ երեկոյթը, որուն յաջորդեց խմբանկարներ ու ժողովուրդի գնահատականներու փոխանակում արուեստագետներուն հետ:

Սակայն այս սրտառուչ ու պաղ ծմբոյնի օղբ կարծես մի փոքր փորձանք պատրաստած էր մեր բոլորին եւ պատահեցաւ անսպասելի կրակմար

խողովակի մը (սառելու պատճառաւ) պայթումը:

Ջրհեղեղի նման ջուրերու հոսքը ողողեց խումբի ապրանքներն ու հագուստներու մեծամասնութիւնը:

Սակայն 3այ Բեմի անդամները, մեծահոգի ու խմբային զօրակցութեան ոգիով, իրարու հագուստներ ու կօշիկներ փոխ տալով, բռնեցին վերադարձի ճամբան:

Այո, օղբ պաղ էր, ոմանք ալ թաց ու մրսած սակայն շաբաթավերջի 2 ելոյթներու արձանագրուած յաղթանակը եկած էր տաքցնել խումբի տրամադրութիւնը:

Ապրիք 3այ Բեմի անդամներ: Ձեր զոհողութիւնը, ձեր անքուն 2 երեկոյնները եւ անհաճոյ պատահարի դիմագրաւումը բոլորդ գնահատանքի արժանի էք:

Օթթաուայի եւ Թորոնթոյի ներկաները այդ կրնան վկայել... ու ձեր վերադարձը կը սպասեն:

Ներկայ Սը

## Թորոնթոյի միջ-յարանուանական մարմնին կազմակերպութեամբ Վարդանանց Յերոսամարտի Տօնակատարութիւն

### ՍԱՏԱԹ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Փետրուար 12, 2015-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ 3այ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 8:00-ին տեղի ունեցաւ Վարդանանց 2օրավարաց եւ Ղեւոնդեանց հերոսամարտի 1564-ամեակի տօնակատարութիւնը, հաւաքական աղօթքը եւ հանդիսութիւնը, կազմակերպութեամբ Թորոնթոյի միջ-յարանուանական մարմնին, մասնակցութեամբ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ 3այ

Կաթողիկէ, Ս. Երրորդութիւն 3այց. Առաք. եկեղեցւոյ, Ս. Աստուածածին 3այց. Առաք. եկեղեցւոյ եւ 3այ Աւետարանական եկեղեցիներու: Ներկայ էին մեծ թիւով հաւատացեալներ, որոնք եկած էին հաղորդուելու Վարդանանցի խորհուրդով:

Տօնակատարութեան ներկայ էին 3ոգշ. Ս. Ստեփանոս վրդ. Փաշայեան, հովիւ՝ Ս. Աստուածածին 3այց. Առաք. եկեղեցւոյ, Գերշ. Ս. Եղիա Ծ. վրդ. Գիրեճեան, հովիւ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ 3այ Կաթողիկէ եկեղեցւոյ, Արժ. Ս. Չարեհ Ա. Զինյ. Չար-



գարեան հովիւ՝ Ս. Երրորդութիւն 3այց. Առաք. եկեղեցւոյ եւ Արժ. Տէր Կոմիտաս Ա. Զինյ. Փանոսեան, ծխատեր հովիւ՝ Ս. Աստուածածին հայց. Առաք. եկեղեցւոյ:

Բացման խօսքով հանդես եկաւ Գերշ. Ս. Եղիա Ծ. վրդ. Գիրեճեան հոգեւոր հովիւ 3այ Կաթողիկէ համայնքի, ու տուաւ օրուայ պատգամը:

Հաւաքական Տէրունական աղօթքով սկսաւ յայտագիրը, որուն յաջորդեց Ս. Գրային ընթերցումներ: Ի դիմաց Ս. Երրորդութիւն 3այց. Առաք. եկեղեցւոյ Արժ. Ս. Չարեհ Ա. Զահանան ընթերցեց, «Աղօթք յաղ-

թանակի համար» Սաղմոսներու գիրքէն (20/2-9)», տիար Միհրան Ճիգմեճեան, 3այ Աւետարանական եկեղեցւոյ ներկայացուցիչ, ընթերցեց՝ Պօղոս Առաքեալի կողմէ Տիմոթէոսին գրած երկրորդ նամակէն, «Քրիստոս Յիսուսի հաւատարիմ զինուորը (2-13)» եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ծխատեր հովիւ Արժ. Տէր Կոմիտաս Ա. քահանան ընթերցեց, Պօղոս Առաքեալի կողմէ Էփեսոսցիներուն գրած նամակէն «Աստուծոյ Սպառազինութիւնը (10-20)»:

Ճար. էջ 15

# ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՄԻՍԻՍՈԿԱՅԻ Ս. ՎԱՐԴԱՆ ԾՈՒԽԻՆ

Գանատահայոց թեմի Առաջնորդ գերաշնորհ Ս. Աբգար եպս. Յովակիմեանն իր անդրանիկ այցելությունը տուաւ Միսիսոկայի Ս. Վարդան ծուխին Յունուար 17-18, 2015-ին:

Շաբաթ, Յունուար 17-ին Առաջնորդ Սրբազանը ժամանեց Միսիսոկա քաղաք, եւ իրեն դիմաւորելու եկած էին Ս. Վարդան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ս. Միւռն քինյ. Սարգիսեան, երեցկին Նարինէ Սարգիսեան եւ Ծխական Խորհուրդի ատենապետ տիար Վազգէն Ալթունեան: Նոյն օրը երեկոյեան, Ատենապետի տանը ընդունելութիւն պատրաստուած էր մասնակցութեամբ Ծխական Խորհուրդի անդամներուն, նաեւ Թեմական Խորհուրդի անդամ տիկ. Ճուլիա Տումանեանին: Նոյն օրը տեղի ունեցաւ Ծխական Խորհուրդի 2015 տարուան առաջին նիստը նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան հոր, որուն ընթացքին հակիրճ զեկոյցներ ներկայաց-



ընտանիքի 6 անդամներուն, եւ ի յիշատակ ողբացեալ Զրանդ Տինքի մահուան 8-րդ տարելիցին:

Յետ հոգեհանգստեան պաշտօնին, եկեղեցւոյ հովիւ Ս. Միւռն քինյ. Սարգիսեան բարեգալստեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, մաղթելով իրեն քաջառողջութիւն եւ Աստուծոյ օգնականութիւն եւ պահպանութիւն առաջնորդական իր օրինեալ առաքելութեան մէջ: Ս. Միւռն յիշեց թէ Սրբազան Առաջնորդի ընտրութեան առիթով իր շնորհաւորական խօսքին մէջ շեշտած էր թէ ինչու՞ կուսակրօն միաբաններուն կը ողջունենք ըսելով Աստուած օգնական, որովհետեւ անոնց լուծը ծանր է եւ նոյնիսկ եթէ անոնց շուրջ տարբեր մարդիկ կ'օժանդակեն, այդուհանդերձ անոնք պետք ունին Աստուծոյ օգնութեանը, եւ անոնք կը ստանան այդ իրենց հաւատքով եւ աղօթքներով: Իսկ կուսակրօն Զոգեւորականին պատասխանը կըլլայ ըսելով՝ Աստուած պահպան, որովհետեւ Աստուած է որ կը պահպանէ մեզ եւ պահպանած է Յայ եկեղեցին դարեր շարունակ, հաւատալով սաղմոս երգուին որ կըսէ՝ “Եթէ Տէրը տունը չշինէ, իգուր կը չարչարուին այն շինողները, եթէ Տէրը քաղաքը չպահպանէ, իգուր կը հսկեն պահպանողները (Սաղմոս ԾԻ2,2)”: Աւարտելով իր բարեգալստեան եւ ողջոյնի խօսքը, Ս. Միւռն այդ խորհուրդի ներքոյ ձեռագործ աշխատանք մը նուիրեց Սրբազան Առաջնորդին, որ է Յայկական խաչը եւ շուրջը գրուած՝ Աստուած պահպան: Ս. Միւռն խնդրեց որ ձեռամբ Առաջնորդի գնահատուի նաեւ Ս. Վարդան ծուխի ատենապետն ու իր տիկինը որոնք երկուստեք տարիներ շարունակ ծառայած եւ կը ծառայեն Ս. Վարդան ծուխին ինչպէս նաեւ թեմական տարբեր կառոյցներէն ներս: Տիար Վազգէն Ալթունեան արդէն տասը տարիներ կը ծառայէ Ս. Վարդան ծուխին, եղած է թեմական Խորհուրդի անդամ, առ այսօր Առաջնորդարանի մնայուն հիմնադրամի մարմնի անդամ է, իսկ տիկ. Անի Ալթունեան, կը ծառայէ Ս. Վարդան ծուխին, հիմնադիրներէն է Ս. Վարդան Ամենօրեայ ճամբարին, եւ տարիներ ծառայած ու ներկայիս գործադիր տնօրէնուիին է թեմական Արարատ ճամբարին: Ի գնահատանք իրենց բազմամեայ

տարիներու գործունեութեան, հայկական մանրանկարչութիւնը փորագրուած Մոզերու երկրպագութիւնը ներկայացնող քանդակ մը նուիրուեցաւ:

Յետ ողջոյնի խօսքին եւ գնահատանքին, խնդրանք հոգեւոր հովուի եւ ձեռամբ Առաջնորդ Սրբազան հոր տեղի ունեցաւ ուրարակրի տուչութիւն երկու դպիրներու՝ Եղիա Սարգիսեանին եւ Սեւան Տումանեանին:

Ձեռնադրութեան աւարտին Ս. Միւռն հրաւիրեց առաջնորդ Սրբազանը որպէսզի իր անդրանիկ պատգամը փոխանցէ Ս. Վարդան ծուխի հաւատացեալ ժողովուրդին: Սրբազանը իր խօսքին մէջ անդրադարձաւ եւ յիշեց այն օրը երբ նոյն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Առաջնորդական ընտրութիւնը ըսելով “Չգացումներս կը նորոգուին երբ կը տեսնեմ այս եկեղեցին, որու կամարներու ներքոյ անցեալ տարուան Մայիսին,



Աստուծոյ կամօք եւ թեմական պատկառելի պատգամաւորներու քուէարկութեամբ ընտրուեցայ Գանատահայոց թեմի Առաջնորդ, որուն համար մեր աղօթքը կը բարձրացնենք որ Աստուած անսասան պահէ Յայաստանեայց Եկեղեցին, Գանատահայոց թեմն ու հաւատացեալները”: Առաջնորդ Սրբազանը շարունակեց իր պատգամը Ս. Ծննդեան Խորհուրդի ներքոյ, ըսելով՝ Մոզերու երկրպագութիւնն ու հրեշտակներու փառաբանութիւնը օրինակ եւ դաս պետք է ըլլան մեզի, որպէսզի երթանք դէպի Աստուած եւ տանք ամենաարժեքաւոր նուէրը, ինչպէս կատարեցին մոզերը: Ներկայ դարու մարդուն ամենէն արժեքաւոր բանն է՝ ժամանակը, եւ պետք է այն նուիրենք Աստուծոյ եւ իրարու սիրոյ եւ ծառայութեան ոգիով: Սրբազանն իր գնահատանքը փոխանցեց ծուխի հովիւին եւ Ծխական Խորհուրդին, ինչպէս նաեւ յարակից մարմիններուն: Իր գնահատանքի խօսքը ուղղեց նաեւ այդ տարածքին մէջ գործող հայկական հաստատութիւններուն՝ ԶՕՄ-ի Արագաստ մասնաճիւղին, Արաքս Միութեան, Զալթըն-Փիլ Յայկական Շաբաթօրեայ վարժարանին եւ ծուխի հիմնադիրներուն:

Յետ Ս. Պատարագի ընդունելութիւն պատրաստուած էր եկեղեցւոյ սրահին մէջ:

Երկուշաբթի Յունուար 19-ին, Առաջնորդ Սրբազանը մեկնեցաւ Միսիսոկայէն դէպի Թորոնթօ եւ ապա Մոնթրէալ:



ւեցան 2014 տարուան ձեռնարկներուն, հոգեւոր կեանքին եւ հաշուետւութեան մասին, որմէ ետք ներկայացուեցան 2015 տարուան ծրագիրներն ու պիւտճեն, ի պատրաստութիւն ծուխի տարեկան անդամական ընդհանուր ժողովին գոր տեղի պիտի ունենայ Փետրուար 22, 2015-ին: Ժողովի աւարտին Առաջնորդ Սրբազանը գնահատեց Ծխական Խորհուրդի անդամները եւ մաղթեց առաւել արդիւնաւետ համայնքային կեանք 2015 տարուան ընթացքին:

Կիրակի, 18 Փետրուարին Օբվիլ քաղաքի Սէնթ Զաթալըթ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ եպիսկոպոսական Ս. Պատարագ: Առաջնորդ Սրբազան հոր առընթերակայ էր Զոգեւոր Զովի Արժ. Ս. Միւռն քինյ. Սարգիսեան, Ս. Սեղանին սպասարկեցին բարեշնորհ սարկաւազներ, բարեկրօն ուրարակիրներ եւ դպիրներ: Եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ տիար Սարգիս Զամայոյեանի, եւ դաշնամուրի ընկերակցութեամբ տիկ. Իվէթա Մէլքումեանի ներդաշնակ երգեցողութեամբ հոգեպարար մթնոլորտ մը ստեղծեցին եկեղեցւոյ մէջ հաւաքած ւաւելի քան 150 հաւատացեալներուն որոնք եկած էին դիմաւորելու Առաջնորդ Սրբազան հորը, լսելու եւ օրհնութիւնը ստանալու:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն ի յիշատակ Գիւմրիի վայրաբարոյ աղետին զոհ գացած Աւետիսեան

## Սուրիահայ բժիշկներու կողմէ անվճար գննում՝ հայաստանաբնակ սուրիահայերու համար

“Սուրիահայերու հիմնախնդիրները համակարգող Կեդրոն” հասարակական կազմակերպութեան նախաձեռնութեամբ, մէկ տարիէ ի վեր շաբաթական մէկ օր յաճախակաւ նուրբեամբ, հայաստանաբնակ սուրիահայերու համար կ'իրականացուի բժշկական անվճար գննում:

Ըստ “Հայերն Այսօր”-ի՝ իւրաքանչիւր շաբաթ օր, առաւօտեան ժամը 11:00-էն մինչեւ կեսօրուան 13:00 սուրիահայ բժիշկներ՝ Ժան Պեշիւեան (մանկաբուժ), Կարօ Զանկեան (ակնաբոյժ), Մակի Զէշիշեան-Զանկեան (ակնաբոյժ), Յակոբ Թամերեան (ընդհանուր բժիշկ), Սուքիաս Պերպերեան (մաշկաբան) եւ երկու բուժքոյր՝ Լիլիթ Մարտի-

րոսեան եւ Լիլա Զամամեան, կամաւոր կերպով կը գննեն կեդրոն յաճախող հիւանդները՝ նշանակելով համապատասխան բուժումներ: Նախապէս ծրագրին կ'աջակցեն նաեւ բժիշկներ՝ Գրիգոր Տարագեան (սրտաբան) եւ Մերուժ Զէշիշեան (կնոջաբան), որոնք այժմ կը գտնուին Հայաստանէն դուրս, սակայն շուտով, մէկ ամիս ետք, անոնք կը ժամանեն Հայաստան եւ դարձեալ կ'անցնին նոյն գործին:

Առ այսօր այս ծրագրի ծիրէն ներս բժշկական գննում անցուցած են 997 սուրիահայեր, ծրագիրը ոչ միայն շարունակուելու այլ մնայուն ըլլալու միտում ունի. “Սուրիահայերու հիմնախնդիրները համա-



կարգող Կեդրոն” հասարակական կազմակերպութեան տնօրէնուիի Տիկին Լենա Զալաճեան յայտնած է, որ կազմակերպութիւնը դիմած է ԶԲԸՄ-ին նոյն նպատակով մնայուն դարմանատուն մը հիմնելու առաջարկով, այնպէս ինչպէս Հալէպի

մէջ Հայոց Ցեղասպանութենէն ետք հիմնուեցաւ հայերուն բժշկական օգնութիւն ցուցաբերելու դարմանատունը, այսօր նպատակայարմար է, որ նման դարմանատուն մը կառուցուի նաեւ Հայաստանի մէջ”, - ըսաւ Տիկին Զալաճեան:

ԱՆՑԵԱԼԻ ԶԱՌՈՒՂԻՆԵՐԸ

ԻՆՉՊԵՐՍ ԿԵԱՆՔԻ ԿՈՉՈՒԵՑԱԲ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Մելգոնեանի երդիքին տակ ապրող որբերս պիտի լուծեն իմ ազգիս վրեժը... Աղա Կարապետ Մելգոնեան

ՅԱԿՈՔ ՎԱՐԳԻՎԱՌԵԱՆ

Մելգոնեան եղբայրներու կատարած ազնուական նուիրատուութեան ու կտակին իրագործումով, երիտասարդ տրոփող սիրտեր կեանքի կը կոչուին Հաստատութենէն ներս եւ այդպիսով վերածնունդ կը սկսի ապրիլ Յեղասպանութենէն վերապրող նորահաս սերունդ մը Մելգոնեանէն ներս:

Յունուար 26, 1926ին որբահալաքի աշխատանքին շնորհիւ, հայ որբեր կը ժամանեն Ֆամակուքա, ուրկէ ինքնաշարժերով Նիկոսիա կը փոխադրուին, առաջնորդութեամբ ուսուցիչ Յովհաննէս Արուսեանի: ՀԲԸՄի Երուսաղէմի եւ Պէյրուքի որբանոցներէն 74 սաներ, որոնք իրենց դժնդակ ծովագնացութենէն անհանգիստ վիճակով կը հասնին Հաստատութիւն, առաջին իսկ րոպէէն կը յանձնուին հոգատար մայրիկներու խնամատարութեան ու սննդարար ճաշերէ ետք տաքուկ անկողին մը կը գտնեն:

Ահա՛ այսպէս սկիզբ առաւ կեանքը Մելգոնեանէն ներս, հայ որբերու բաբախուն սրտերով լի: Արդարեւ, պատմական թուական մը կ'արձանագրուի այս կերպով՝ Լուսինեան Հարստութեան պատմութեամբ լեցուն հարուստ այս կղզիին մէջ, որ իր բարձրաբերձ լեռներու կատարներէն կը դիտէ միզամած լեռնաշխարհը Հայոց Կիլիկիոյ: Հաստատութեան խոհանոցին ծուխը կը սկսի բարձրանալ որպէս նշանակ քանդուած օճախներու վերականգնումին:

Քանի մը օր նախնական պատրաստութիւններէ, հանգիստէ ու արեւոտ բացաստաններու մէջ պտոյտներով ու երգերով անցնելէ ետք, անոնք կը ներկայանան քննութեան որոշելու համար իրենց դասարանները: Խեղճ որբերուն հա-

մար Կիպրոսը դրախտ մը կը հանդիսանայ: Իրենց հարազատ տունը կ'ըլլայ:

Առաջին տարիներու սաներուն թիւը կը հասնի 78-ի, որոնցմէ երկուքը՝ Քորֆույէն եւ միւս 2-ը Աղէքսանդրիայէն կու գային: Շուտով Կորնդուէն կը հասնին նաեւ 16 սաներ: Ասոնք կը դառնան իսկական հիմնադիր ուսանողները ՀԲԸՄի այս եզակի Հաստատութեան:

Բրիտանական կառավարական բժիշկ Տոքթ. Սիմիոնիտէ Յունուար 29ին այցելելով Հաստատութիւն, գոհ կը մնար աշակերտներուն առողջական վիճակէն եւ հաստատութեան մէջ տիրող խնամուած մաքրութենէն ու ատենին մամուլին մէջ կը յայտնէ իր ականատեսի խոստովանութիւնները:

Ի բացակայութեան Ամենապատիւ Չաւէն Արքեպիսկոպոսի (Յեղասպանութեան օրերու Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին) անձնուիրաբար կը փոխարինէր զինք Յովհաննէս Շաքարեան: Ան Պանք Օթոմանի սիրուած պաշտօնեան եղած էր, որ պատերազմի միջոցին Իզմիրի շրջաններուն մէջ վարած էր դրամատան տնօրէնի պաշտօնը: Անոր տքնաջան աշխատանքին արդիւնքն էր որբանոցի շինութեանց եւ կահաւորումի հաշիւներու վերահսկողութիւնը, որ այնքան անխնամ վիճակի մատնուած էին Մուշէղ Սերոբեանի օրով: Շաքարեան կը վայելէր Բարերարին եւ Չաւէն Սրբազանին լստահութիւնն ու համակրանքը: Սրբազանը կը գտնուէր Աղէքսանդրիա խնամակալութեան գործերով: Դժբախտաբար, ծմբան հետեւանքով Բարերարը՝ Կարապետ Մելգոնեան եւս կը գտնուէր Աղէքսանդրիա եւ հոն պիտի մնար մինչեւ զարուն:

Ընդհանուր տնօրէնը Լ. Թաշճեան դասախօսութիւններու շարքի մը սկիզբ կու տայ երբ ան ուսու-



Garabad Melkonian, Armenian industrialist

ցիչներուն եւ սաներուն գեղեցիկ յորդորականով մը կը բացատրէ թէ ի՞նչ զգացումներով՝ բարերարը, ուսուցչութիւնն ու սաները կը զօդեն զիրար, եւ վերջապէս ասոնք են որ անկեղծ բարեկամութեամբ, փոխադարձ սիրով ու գուրգուրանքով, պիտի դառնային հիմք այս Հաստատութեան բարոյական կոչումին:

Թաշճեան յաճախ կը շեշտէ կարեւորութիւնը հաստատութենէն ներս կարգ ու կանոնի պահպանման ոգիին, որ պիտի դիւրացնէր ամէն նախաձեռնութիւնն ու աշխատութիւն. ի վերջոյ այս որբերը եկած էին հոն ապագայի յաջողութեան հեռանկարով:

Տնօրէնը ամէն առիթով կը յուշէ, թէ հանգստաւետ շէնքի մը մէջ գտնուիլը պարտականութիւն կը դնէ իւրաքանչիւրին վրայ՝ սիրոյ եւ յարգանքի զգացումներ տածելու բարերարին անձին նկատմամբ: Հաստատութեան մթնոլորտը մոռցնել պիտի տար սաներուն տխուր անցեալը եւ պիտի հեռացնէր զի-

րենք տառապանքի այն տխուր օրերէն որ եղան իրենց երեկը: Իսկ հոգեկան խաղաղութիւնը որ պիտի տրուէր իրենց, պիտի կազդուէր իւրաքանչիւրին ներաշխարհը, որպէսզի անոնք դիւրութեամբ կարենային ապագայ անակնկալները դիմագրաւել:

Այնուհետեւ, Մելգոնեանի պայծառ պատմութեան էջերուն մէջ կ'արձանագրուի աշակերտներուն անունները եւ այսպիսով ծնունդ կ'առնէ ՀԲԸՄի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Որբերը ՅԷՆ 14 տարեկան պատանիներ էին, ամենքն ալ հայախօս: Երջանիկ տղաք, որ ազգային այդ օրերու դժբախտ իրականութեան մէջ կրթութիւն եւ տոհմիկ դաստիարակութիւն պիտի ստանային հարուստ Հաստատութեան մը ընծեռած կարելիութիւններով:

Կղզիին բնակիչներէն անպակաս էին հայ, յոյն, անգլիացի եւ թուրք երկսեռ այցելուներ, որոնք իրենց հիացումը կը յայտնէին շէնքին նպատակայարմար կառուցման, դասարաններու կանոնաւորութեան, մաքրութեան, առատ լոյսին, մանաւանդ աշակերտներուն վերնայարկի օդառատ ննջարանին մէջ տիրող կոկիկ կահաւորումին ի տես: Որբերու անցեալ կեանքին խելամուտ՝ ցաւ տեսած սերունդը կ'ապրի երջանիկ:

Ահա թէ ինչու Կիպրոսի կառավարութիւնը պատշաճ առիթներով կ'արձագանգէր թէ Մելգոնեանի պատմութիւնը հաստատապէս կ'առնչուի Կիպրոսի պատմութեան հետ: Ան մասնիկն է չքնաղ կղզիին եւ մեր բարոյական պարտականութիւնն է պահպանել իւրաքանչիւր ճիւղը անոր պատմութեան:

Նիլ Եորթ

Հաղորդագրութիւն

Շաբաթ, 14 Փետրուար 2015-ին, նախագահութեամբ Ամեն. եւ Գերջ. Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ հայոց պատրիարքին, հայ կաթողիկէ Չմմառի վանքին մէջ տեղի ունեցաւ «Հայոց Տեղասպանութիւնը եւ արխիւները» միօրեայ գիտաժողովը՝ կազմակերպութեամբ Չմմառի պատրիարքարանի կղերի միաբանութեան եւ Հայոց Տեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի կեդրոնական մարմինին: Գիտաժողովին մասնակցեցան Լիբանանի մէջ պապական նուիրակը, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Աշոտ Զոչարեան, լիբանանեան համալսարաններու իրաւագիտութեան եւ պատմութեան բաժանմունքներու պատասխանատուներ եւ դասախօսներ:

Բացման խօսքին մէջ, Ամեն. եւ Գերջ. Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքը կարեւոր նկատեց Հայոց Տեղասպանութեան ամբողջական պատկերացումին համար արխիւներու ունեցած անփոխարինելի դերը: Ան մատնանշեց ճշմարտութեան բացայայտման եւ հաւաքական յիշողութեան պահպանման համար արխիւներուն տեղն ու դերը: Հուսկ ան հայրապետական օրինութեամբ ողջունեց Ս. Էջմիածինի եւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեանց վեհափառները, Լիբանանի հայ առաքելական եւ



աւետարանական համայնքներու կրօնական պետերը եւ գիտաժողովին մասնակից շուրջ վեց տասնեակ մտաւորականները, Հայոց Տեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի կեդրոնական մարմինի անդամները եւ միութեանց ներկայացուցիչները:

Ապա բարի գալուստի խօսք արտասանեց Չմմառի հայ կաթողիկէ վանքի վանահայր, պատրիարքական փոխանորդ գերապայծառ հայր Գաբրիէլ Թ. Շ. վրդ. Մուրատեան, որ ծանրացաւ վախի հասկացողութեան վրայ:

Շար. էջ 14

# Դաւիթ Ուսուփաշվիլի. «Վրաստանի եւ Հայաստանի միջեւ չեն կրնար հիմնախնդիրներ գոյութիւն ունենալ»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան 17 Փետրուարին ընդունած է Վրաստանի խորհրդարանի նախագահ Դաւիթ Ուսուփաշվիլիի գլխաւորած պատուիրակութիւնը:

Նախագահը ողջունած է հիւրը եւ գոհունակութեամբ ընդգծած, որ վերջին տարիներու բարձրաստիճան հանդիպումները պարբերական բնոյթ կը կրեն եւ նոր շունչ կու տան երկկողմանի յարաբերութիւններուն՝ կարելիութիւն տալով փոխադարձ այցելութիւններու ընթացքին քննարկելու եւ լուծումներ գտնելու հայ-վրացական բազմազան օրակարգի արդիական հարցերուն:

Նախագահ Սերժ Սարգսեանն ու Վրաստանի խորհրդարանի նախագահը համակարծիք եղած են, որ պատմական ամուր հիմքի վրայ կառուցուած հայ-վրացական եղբայրական եւ բարի դրացիական յարաբերութիւնները տարուէ տարի կ'ամրապնդուին միջպետական մակարդակին վրայ՝ հաստատելով, որ այս իմաստով խորհրդարանականներուն դերը անփոխարինելի է:

Սերժ Սարգսեանն ու Դաւիթ Ուսուփաշվիլին կարելոր նկատած են նաեւ երկու պետութիւններուն կողմէ ընթացիկ քաղաքական գործունեութեան մէջ իրարու համար սկզբունքային նշանակութիւն ունեցող զգայուն հարցերու ու խնդիրներու նկատմամբ հաւասարակշիռ եւ նրբանկատ վերաբերմունքն ու փոխադարձ շահերու յարգումը:

Դաւիթ Ուսուփաշվիլին գոհունակութեամբ խօսած է երեւանեան այցելութեան ծիրին մէջ իր ունեցած քննարկումներուն արդիւնքներուն մասին եւ շնորհակալութիւն յայտնած է իր



գլխաւորած պատուիրակութեան նկատմամբ ցուցաբերուող ջերմ հիւրընկալութեան համար: Ան ընդգծած է, որ իր այցելութեան նպատակն է անգամ մը եւս շեշտել եւ յստակ ուղերձ յղել Հայաստանի հասարակութեան, որ Հայաստանի եւ Վրաստանի ընտրած համարկման տարբեր ուղիներէն անկախ, երկու բարեկամ երկիրներն ու ժողովուրդները մնայուն կերպով միասին են, կողք-կողքի: «Մենք կ'ապրինք այնպիսի լարուած շրջանի մէջ եւ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակի մէջ, որ մեր ժողովուրդներուն համար չափազանց կարեւոր են խաղաղութիւնն ու կայունութիւնը: Համոզուած եմ՝ որ քան յաճախակի ըլլան մեր հանդիպումները, եւ յստակ կերպով արտայայտենք մեր դիրքորոշումները, տեղույն վրայ արձագանգենք ծագող խնդիրներուն, այնքան պիտի նպաստենք մեր ժողովուրդներուն միջեւ բարեկամութեան եւ միջ-

պետական կապերու առաւել ամրապնդման», նշած է Վրաստանի խորհրդարանի նախագահը: Անոր համաձայն՝ իր այս այցելութիւնը անգամ մը եւս հաստատեց այն համոզմունքը, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ չեն կրնար ըլլալ հիմնախնդիրներ, կան հարցեր, որոնք լուծելի են բանակցութիւններու միջոցով:

«Մեր երկիրներուն միջեւ յարաբերութիւններուն մակարդակը այնպիսին է, որ թոյլ կու տայ անկեղծօրէն եւ անկաշկանդ քննարկելու բոլոր հարցերն ու միացեալ լուծման ուղիներ գտնել՝ պահպանելով ամուր բարեկամութիւնը: Հայաստանը միշտ կարելոր նկատած է Վրաստանին դերը ոչ միայն երկկողմանի յարաբերութիւններու զարգացման, այլ նաեւ Հարաւային Կովկասի մէջ շրջանային անվտանգութեան եւ կայունութեան պահպանման գործին մէջ», հաստատած է Սերժ Սարգսեան:

Հանդիպումին ընթացքին զրուցակիցները անդրադարձած են շրջանի խնդիրներուն եւ գոյութիւն ունեցող մարտահրաւերներուն: Նախագահ Սերժ Սարգսեան հիւրերուն ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման բանակցային գործընթացը: Սերժ Սարգսեանն ու Դաւիթ Ուսուփաշվիլին խօսած են նաեւ Վրաստանի տարածքին մէջ հայկական հոգեւոր-մշակութային ժառանգութեան առնչուած հարցերուն, Վրաստանի նոր արտօնագրային քաղաքականութեան գործադրութեան իբրեւ արդիւնք այդ երկրին մէջ բնակող Հայաստանի քաղաքացիներուն համար յառաջացող կարգ մը խնդիրներուն մասին եւս՝ քննարկելով լուծման կարելիութիւնները:



## Մարսէյլը որոշեց նեցուկ կանգնիլ Հայոց Ցեղասպանութեան

Փետրուար 17-ին Ֆրանսայի Մարսէյլ քաղաքի քաղաքային խորհուրդը որոշած է սատարել 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան յիշատակի ոգեկոչման ձեռնարկները: Մարսէյլի քաղաքային խորհուրդի նիստի ժամանակ քաղաքապետի տեղակալ Տիտիէ Փարաբեան ներկայացուց «Քննարկումներ 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման առնչութեամբ», որ ընդունուեցաւ միաձայն: Այս մասին կը հաղորդէ Գրիգոր Ամիրզայեան:

Այսպիսով, Մարսէյլը որոշեց նեցուկ կանգնիլ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առիթով կազմակերպուած ձեռնարկներուն:

Ստորեւ կը ներկայացնենք Տիտիէ Փարաբեանի խօսքը, որոշ կրճատումներով.

«Պարո՛ն քաղաքապետ, 2015 թուականը առանձնայատուկ նշանակութիւն ունեցող տարի է՝ յիշատակելու 20-րդ դարու տեղի ունեցած ցեղասպանութիւնները: Իսկ 1915 թուականի Ապրիլ 24-ին սկսաւ ցեղասպանութիւն, որ 1,5 միլիոն հայերու կեանք խլեց: 1915 թուականէն սկսած՝ Մարսէյլ քաղաքը ընդունած է Ցեղասպանութեան բազմաթիւ վերապրածներու, որոնք այսօր հայկական Սփիւռքի մաս կազմող հզօր ներկայութիւն են: 2001 թուականի Յունուար 29-ին Ֆրանսան հրապարակաւ ճանչցաւ 1915 թուականի Հայոց Ցեղասպանութիւնը: Հակառակ պատմական ապացոյցներուն, 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ Հայոց Ցեղասպանութիւնը, ենթակայ է դատապարտման եւ հերքումը վիրաւորանք է գոհուածներու յիշատակին եւ անոնց ժառանգներու արժանապատուութեանը:

Նկատենք, որ Մարսէյլի հայ համայնքը օժանդակած է քաղաքի մշակոյթի զարգացման ու մեր քաղաքի զարգացման: Մարսէյլ քաղաքը եւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանը հաստատած են զօրաւոր կապեր: Երեւանի հետ 1992 թուականին ստորագրուեցաւ առաջին համագործակցութեան համաձայնագիրը, որ վերանորոգուեցաւ 2013 թուականի Հոկտեմբերին:

Այս ամէնը կը քաջալերեն մեզի առաջարկելու քաղաքային խորհուրդին ընդունելու այս բանաձեւը:

Լսելով զեկոյցը՝ Մարսէյլի քաղաքային խորհուրդը որոշեց յիշատակել Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը: Որոշեց ծրագիրներ մշակել՝ ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ, ինչպէս նաեւ պայթարիլ ցեղասպանութեան ժխտման դէմ:

## ՀԱԼԷՊԻ ՄԵՋ ՉԱՆԱՉԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ՀՐԹԻՌԱԿՈՇՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԿ ԹԻՐԱԽ ԴԱՐՁԱՆ ԱԶԻԶԻԷ ԵՒ ՊԸՍԹԱՆ ԳԸԼԱՓ ԿԱՆ ՉՈՐԵՐ ԵՒ ՎԻՐԱԿՈՐՆԵՐ

Վերջերս Հալէպի մէջ եւ արուարձանները սուրիական բանակը զինուորական ծանր գործողութիւններ կը կատարէ զինեալ խմբաւորումներու վերահսկողութեան տակ գտնուող շրջաններու դէմ:

Մինչ սուրիական բանակը նկատառելի յառաջխաղացք կ'արձանագրէ Հիւսիսային եւ արեւմտեան արուարձաններուն մէջ եւ քաղաքը, զինեալ ահաբեկչական խմբաւորումներ թիրախ կը դարձնեն քաղաքի խաղաղ բնակչութիւնը:

Երեքշաբթի 17 Փետրուար 2015-ին, կէսօրէ առաջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու կողմէ հրթիռակոծման թիրախ դարձան քաղաքի զանազան շրջաններ: Մեծամասնութեամբ քրիստոնէայ եւ հայաբնակ Ազիզիէ շրջանի «Ֆորեսթ» Գաֆիթերիայի դիմացը եւ անոր մօտ վայրեր հրթիռակոծուեցան:



Միւս կողմ, քաղաքի կեդրոնը գտնուող Պըսթան Գըլափ վաճառատանութներու շրջանը եւս հրթիռակոծուեցան: Վեր-



նըշեալ շրջանը 5 հրթիռներու (կազի տակառներ) թիրախ դարձաւ: Նշենք, թէ շրջանի վաճառատանութներէն շատերը կը պատկանին հայերու՝ հրթիռներէն մէկը ինկաւ արհեստաւորի մը խանութը, բայց բարեբախտաբար չպայթեցաւ, ուրիշ մը «Հարամ» ընկերութեան մօտ: Հրթիռակոծուեցան նաեւ Սոկամաօ, Թըշրին թաղամասը եւ այլն:

Արձակուած հրթիռներու պայթումին պատճառով արձանագրուեցան 8 զոհեր եւ 36 վիրաւորներ:

Յայտնենք, թէ պայթումները նիւթական ծանր վնասներ պատճառեցին շրջանի ինքնաշարժներուն, բնակարաններուն եւ խանութներուն: Տակաւին չենք նշեր անոր պատճառած վախի, սարսափի ու հոգեկան խանգարումներու մասին:

Իսկ, Երկուշաբթի օր Նոյնպէս Հալէպի Սըրիան ալ-Ատիմ շրջանին մէջ ինկած հրթիռներուն պատճառով արձանագրուեցան բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ:

# ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 2 MARS 2015

## L'Arménie déclare le 9 décembre Journée du Souvenir pour tous les génocides

Le gouvernement arménien a approuvé la proposition de déclarer le 9 décembre, Journée de commémoration des victimes de tous les génocides. La mesure a été proposée par les députés Artak Zakarian, Zaruhi Postanjian, Koryun Nahapetian, Shirak Torosian, et Alexandre Arzoumanian.

La date a été choisie car l'Assemblée générale des Nations Unies a adopté la Convention pour la prévention et la répression du crime de génocide (CPPCG) le 9 décembre 1948.

Le gouvernement a cependant rejeté un autre projet de loi proposé par Zaruhi Postanjian sur « L'occupation des terres arméniennes par la République de Turquie et la privation des Arméniens de leur patrie. »



## L'ambassade américaine va commémorer les victimes du génocide arménien

L'ambassade américaine en Arménie marquera le centenaire du génocide arménien avec le peuple arménien a déclaré l'ambassadeur américain nouvellement nommé Richard Mills lors d'une conférence de presse.

Quant à la participation du gouvernement américain, l'ambassadeur a déclaré que le président Obama a eu l'honneur d'être invité à participer aux événements pour marquer le centième anniversaire du génocide, « mais au cours de mes réunions à Washington, il n'était pas encore clair qui représentera le gouvernement américain » a déclaré Richard Mills.

« Au cours de mes rencontres avec le président Serge Sargissian et le ministre des Affaires étrangères Edouard Nalbandian, tous les deux m'ont dit à quel point est importante la



présence de haut niveau des États-Unis dans les cérémonies » a déclaré Richard Mills.

L'ambassadeur s'attend également à ce que de nombreux Arméniens-américains se rendent à Erévan le 24 avril.

## Davutoglu énonce ses conditions pour l'ouverture de la frontière avec l'Arménie

Le Premier ministre turc Ahmet Davutoglu a déclaré que son gouvernement allait rouvrir la frontière fermée avec l'Arménie, à condition que cette dernière rende à l'Azerbaïdjan au moins une des nombreuses régions entourant le Haut-Karabagh.

« Si les Arméniens se retirent au moins d'une région, la frontière pourrait être rouverte », a déclaré Davutoglu lors d'une réunion avec les dirigeants des organisations non-musulmanes et non-gouvernementales, à Ankara.

La déclaration est une première, estimant que les conditions préalables de la Turquie pour la normalisation des relations avec l'Arménie ont, jusqu'à présent, exigeaient que l'Arménie renonce aux sept régions entourant l'Artzakh.

Il a ajouté que les Arméniens vivant en Turquie font partie du pays et ne devrait pas souffrir à cause des relations tendues entre Ankara et Erévan. « La diaspora arménienne n'est pas un ennemi, c'est notre diaspora, » a-t-il ajouté. La Turquie et l'Arménie n'ont pas de relations diplomatiques. La Turquie a fermé sa frontière avec l'Arménie en 1993 en signe de soutien à son allié co-ethnique, l'Azerbaïdjan, alors qu'éclatait la guerre au sujet du Haut-Karabagh.

«Բայց այս տարուայ 24 Ապրիլը կրնայ տարբերիլ նախորդ տարիներէն, քանի որ 2015ին կը լրանայ հայերու համար խորհրդանշական ու զգացական տեսակետէ արժէք

ունեցող դէպքերու հարիւրերորդ տարելիցը: Զայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան, որ աշխարհի զանազան երկիրներու Նախագահները հրաւիրած է 24 Ապրիլին Երեւանի մէջ ներկայ գտնուելու յիշատակի յատուկ արարողութեան, կրնայ դրական պատասխաններ ստանալ: Մինչդեռ Թուրքիոյ Նախագահ Էրտողանի կողմէ ուղարկուած հրաւերները, որոնք կ'առջնչուին Նոյն օրը Չանաքքալէի ճակատամարտի զոհերու յիշատակը յարգելու արարողութեան մասնակցելուն, այնքան ալ մեծ ոգեւորութեամբ չեն ընդունուած», կը գրէ յօդուածագիրը:

Մուրատ Եթէին նաեւ կը շեշտէ որ Յեղասպանութեան հարիւրամեակի արշաւի մէջ հայկական կողմէ գլխաւոր թիրախը Ամերիկեան Քոնկրէսն ու Սպիտակ Տունն են:

«Ուստի Երեւան յատուկ նպատակով Ուաշինկթընի մօտ դեսպան նշանակեց նախկին Վարչապետ Տիգրան Սարգսեանը, որ միջազգային ճանաչում ունի որպէս քաղաքական գործիչ եւ որ Ամերիկայի մայրաքաղաք ժամանելէ ետք կրցած է 2015ին ընդառաջ միաւորել հայկական լոպիի բոլոր խումբերը, մէկդի թողելով անոնց ներքին տարակարծութիւնները», կը շարունակէ Եթէին, նկատել տալով որ

# Թուրքերը կը պահանջեն «Եւրոտեսիլ-2015»-ին որակագրկել Յայաստանը ու Ֆրանսան

Նախապէս հաղորդուած էր, որ Յայաստան պիտի ներկայանայ «Don't Deny» («Մի՛ ժխտեր») երգով: Թուրքերը ենթադրած են, որ Յայոց Յեղասպանութեան հարիւրամեակին առիթով Յայաստան հանդէս պիտի գայ Թուրքիոյ դէմ խիստ խօսքեր պարունակող երգով: Ուստի, մրցոյթի թուրք երկրպագուները change.org կայքին մէջ ստորագրահաւաք սկսած են՝ Եւրոպայի հեռաքանդակներու միութենէն պահանջելով որակագրկել Յայաստանը, քանի որ համաձայն գործող կանոններու՝ մրցոյթը քաղաքականացնելը կ'արգիւրէ:

Ստորագրահաւաքի կազմակերպիչները դժգոհ են, որ ԵՅՄ-ը չէ արձագանգած Յայաստանի այդ քայլին:

Ի դէպ, կազմակերպիչները կը պահանջեն նաեւ որակագրկել Ֆրանսան, քանի որ Ֆրանսայի մասնակիցը ըսած էր, որ երգը պիտի նուիրուի Յեղասպանութեան:

«Եւրոտեսիլ-2015» երգի միջազգային մրցոյթը այս տարի տեղի պիտի ունենայ Վիեննայի մէջ՝ Մայիս 19-ին, 21-ին եւ 23-ին՝ «Կառուցելով կա-



մուրջներ» նշանաբանի ներքոյ: Առաջին ալիքի հասարակայնութեան հետ կապերու բաժինէն յայտնած էին, որ հաւատարիմ մնալով մրցոյթի այս տարուան նշանաբանին, ոգեշնչուելով Յայոց Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցի խորհրդանիշ անմոռուկի գաղափա-

րով, ինչպէս նաեւ՝ առաջնորդուելով բազմաթիւ սփիւռքահայերու ցանկութեամբ, որոնք միշտ եղած են Եւրոտեսիլեան մեր պատուիրակներու կողքին, հանրային հեռուստաընկերութեան ստեղծագործական խումբը որոշած է մրցոյթին ներկայացնել նոր ձեւաչափ:

Կարելոր համարելով խաղաղութեան, միասնութեան եւ հանդուրժողականութեան գաղափարը՝ հանրային հեռուստաընկերութեան ստեղծագործական խումբը որոշած է այս տարի համախմբել 1915 թ-ին աշխարհի 5 մայրցամաքներու մէջ (Եւրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Աւստրալիա) սփռուած հայ ժողովուրդի նոր սերունդը: Խումբին մէջ ծագումով հայ 5 երգիչներ են, որոնք պիտի զուգակցուին անմոռուկի 5 թերթիկներուն հետ, իսկ Յայաստանէն պիտի միանայ եւս մէկ մասնակից, որ պիտի համախմբէ թերթիկները:

Յատուկ մրցոյթին համար ձեւաւորուելիք խումբը պիտի կրէ «Genealogy» անուանումը՝ 6 արուեստագետ, 6 ճակատագիր, 1 պատմութիւն:

## Արթուր Աղաբեկեան. «Նախատեսուած է տրամադրել 350 միլիոն դրամ շինանիւթ ձեռք բերելու եւ այն վերաբնակիչներին յանձնելու համար»

Վերաբնակեցման ծրագիրը ԼՂՀ կառավարութեան առաջնահերթութիւններէն է: Այդ իսկ պատճառով ԼՂՀ իշխանութիւնները տարիէ տարի կը մեծցնեն վերաբնակեցման համար նախատեսուած գումարը:

«Արմէնփրէս»-ի հետ գրոյցի ընթացքին ԼՂՀ փոխվարչապետ շեշտած է, որ արդէն երրորդ տարին է՝ ԼՂՀ կառավարութիւնը կ'իրակականացնէ վերաբնակիչներուն շինանիւթ տրամադրելու ծրագիրը:

«Վերջին 3 տարում պետական պիւտճէից մէկ միլիարդից ավել գումար է յատկացուել այդ ծրագրին: 2015 թուականին պետական պիւտճէով նախատեսուած է տրամադրել 350 միլիոն դրամ շինանիւթ ձեռք բերելու եւ այն վերաբնակիչներին յանձնելու համար: Սա շատ կարելորդ ծրագիր է, որովհետեւ նախորդ 10 տարում Քաջաթաղի շրջանում վերաբնակեցուած ընտանիքները կարիք ունեն բնակարանային պայմանների բարելավման», - ըսած է Արթուր Աղաբեկեան՝ շեշտելով, որ 2014-ին վերաբնակեցման աջակցող կարելորդ ծրագիրներէն է լիբանանահայ համայնքի նախաձեռնած «Արի» ծրագիրը, որուն ծիրէն ներս այս տարի 50 առանձնատուն պիտի յանձնուի շահագործման:

Վերաբնակեցման առանցքային ծրագիրներէն մէկն, ըստ փոխվարչապետին, Ազգային վիճակախաղի իրականացումն է: Արթուր Աղաբեկեանի հաւաստիացումով, արդէն երկրորդ տարին ընթացող Ազգային վիճակախաղը բարձր արդիւնքներ ցոյց կու տայ. հասարակութիւնը ինք կ'աջակցի Արցախի վերաբնակեցման՝ գնելով վիճակախաղի տոմսեր:

«Արցախի կառավարութիւնը կարելորդ է ազգային վիճակախաղի անցկացմամբ վերաբնակեցման ծրագրի խթանումը: Աւարտին է մօտենում իշխանաձորում 10 առանձնատան կառուցումը, որի գումարն առաջացել է 2013-ի վիճակախաղի շահոյթից: 2014-ին վիճակախաղի շահոյթը նոյնպէս

կ'ուղղուի իշխանաձորում ենթակառուցուածքների բարելավմանը», - ըսած է Արթուր Աղաբեկեան՝ ավելցնելով, որ իշխանաձոր համայնքն ունի բնակիչներ ընդունելու եւ անոնց բարեկեցութիւնը ապահովելու բոլոր աղբիւրները:

«Իշխանաձոր համայնքում այսօր 240 բնակիչ կայ, գործում է գիւղապետարան եւ դպրոց: Գիւղն ապահովուած է խմելու ջրով եւ ունի հսկայական տարածքներ բնակարանաշինութեան համար: Մեր առաջնային նպատակն իշխանաձոր համայնքում բնակիչների թիւը 1000-ի հասցնելն է», - ըսած է Արթուր Աղաբեկեան՝ ավելցնելով, որ իշխանաձորի վերաբնակեցումը սերտ կապուած է մէկ այլ՝ Արաքսի ափի վերաբնակեցման ծրագրին հետ: Փոխվարչապետին գնահատումով, իրենց առջեւ յաւակնոտ եւ պատասխանատու նպատակ դրած են եւ վստահ են, որ արդիւնքը դրական պիտի ըլլայ:

«Արաքսի հովիտ» ծրագրի ուղղութեամբ կառավարութիւնը կը շարունակէ ենթակառուցուածքներու բարելավումը եւ պիզնես միջավայրի ձեւաւորումը՝ նպատակ ունենալով այդ շրջանին մէջ եւս իրականացնել վերաբնակեցման աշխատանքներ:

«Արաքսի ափի վերաբնակեցման ծրագրի իրագործումը նոր աշխատատեղեր կը բացի: Կառավարութիւնը նպատակ է դրել 10 հազար հա հող նախապատրաստել հողագործութեան համար: Մէկ հա-ի համար ներդրուած գումարը 400000 դրամ է: Լաւ ենք հասկանում, որ այսօր հող օգտագործողն ի վիճակի չէ իր գրպանից այդ գումարը ներդնել եւ մաշումի ենթարկուած հողը վերամշակել ու հողագործութեամբ զբաղուել: Յետեւաբար, պետական ռեսուրսները (աղբիւրները-ԵՌԳ.) ներդնում են ակնկալիքով, որ հող օգտագործողը մէկ հաից կը ստանայ մի քանի միլիոն շահոյթ եւ հնարաւորութիւն կ'ունենայ 10 տարուայ ընթացքում



վճարելու պետական ներդրումն ու դառնալու հողի սեփականատեր», - ըսած է Արթուր Աղաբեկեան:

Արդէն երկրորդ տարին է՝ Արցախի կառավարութիւնը կ'իրակականացնէ Ազգային վիճակախաղը, որուն հասոյթը կ'ուղղուի երկրին մէջ վերաբնակեցման ծրագիրներու իրականացման: Ազգային վիճա-

կախաղին յաղթածները հնարաւորութիւն կ'ունենան ձեռք բերել «Ղարաբաղ կարպետ» ընկերութեան գորգեր: Ասիկա նաեւ կը խթանէ աշխատատեղերու բացում, քանի որ անցեալ տարուան ընթացքին գործարանը Արցախի շարք մը շրջաններու մէջ արտադրամասեր բացած է:

### Եգիպտական պարբերականին...

Շար. էջ 1-էն


պետական յանձնաժողովը կ'ողջունէ մէկուկէս միլիոն անմեղ զոհերու յիշատակը, երախտագիտութեամբ կը խոնարհի հերոս նահատակներուն առջեւ, որոնք պայքարած են կեանքի ու արժանապատուութեան համար, նաեւ կը վերահաստատէ Յայաստանի եւ հայ ժողովուրդի շարունակական պայքարը ցեղասպանութեան միջազգային ճանաչման, կանխելու յանցագործութիւնները ու ցեղասպանութիւնները եւ վերահաստատելու պատմական արդարութիւնը:

Մագլումեան շարունակած է դիմելով ՄԱԿ-ի անդամ պետութիւններուն, կազմակերպութիւններուն, եւ բոլոր բարի կամքի ժողովուրդներուն անկախ իրենց ցեղային եւ կրօնական պատկանելիութեան, միաւորեն իրենց ջանքերը վերականգնելու պատմական արդարութիւնը, եւ յարգանքի տուրք մատուցելու Յայոց ցեղասպանութեան զոհերուն:

Յանձնախումբը դատապարտած է Թուրքիոյ կողմէ անօրէն շրջափակումը եւ հակահայկական դիրքորոշումը միջազգային հարթակներու վրայ:

Յանձնախումբը կոչ ուղղած է Թուրքիոյ կառավարութեան ճանչնալու Յայոց ցեղասպանութիւնը, որ գործած է Օսմանեան կայսրութիւնը, նաեւ կոչ ուղղած է առերեսուելու սեփական պատմութեան եւ յիշողութեան հետ:

# «Կակաչների Միաբերան Կանչն Է Կարմիր». Ա. Ալիբեյան



**ՄԱՐԻԱՆԱ ՊԵՐԹԻՉԼԵԱՆ - ՂԱԶԱՐԵԱՆ**

Այսօր տերեւաթափ է կրկին, Զալեպ կ'ողբայ իր երիտասարդներու կորուստը: Պատուհանն ականատես կը դառնամ այս լուռ եւ անվերջանալի տառապանքին՝ իբրեւ հայ, իբրեւ մայր եւ իբրեւ մարդ արարած: Նահատակներէն մէկը հայ երիտասարդ է, իսկ միւսը՝ արաբ քրիստոնեայ պարմանուհի: Յուզարկաւորներու փաղանգներուն մէջ անոնց մայրերն ալ կան անկասկած... Պատուհանն կիրակիի համայնապատկերը կը վերածուի դժոխային եղանակի, ամառ չէ, ուրիշ եղանակ՝ մահուան եղանակի: Անդենականին հետ կապուած ինչ, որ յիշեցումի:

Առանձին նստած աթոռին հայեացքս ապակիին, կողքիս աթոռները դատարկ, կը գրուցեմ անոնց մայրերուն հետ, յանցաւոր կը զգամ անոնց վիշտին ու տառապանքին համար, գացողներուն ջախջախուած, դալար եղէգի պէս խորտակուած կեանքերուն համար: Կրնային եւ իրենք չըլլալ զոհերը, ես ըլլայի... հոգ չէ, կրնամ պատկերացնել ատիկա, բայց տարբեր բան՝ այսինքն իմ հարազատներու մէկը... ո՛չ, ո՛չ... անոր համար ալ կրկին յանցաւորութեան զգացումը կը պատէ հոգիս: Միեւնոյն քաղաքի բնակիչ, միեւնոյն արմատներու նոյն ազգի զաւակ ըլլալու վերացական եւ արենակցական զաղտնի կապ մը հարազատութեան ու հոգեկան մօտիկութեան վերածուած՝ կը ճշայ...

Այս քանի երրորդ նահատակն է, քանի քանի տասնեակներով կ'երթան, զոյգ զոյգ, նոյնիսկ պատահեցաւ՝ ընտանեօք: Ամբողջ քաղաքը ընտանիքի մը վերածուեցաւ ժամանակի ընթացքին: Բոլորը՝ իրարու ցաւակից... Բուռ մը հայեր էինք, այժմ սեղմուած բռունցքի ճեղքերէն, աւազի հատիկներու պէս կը ցրուինք կ'անհետանանք

օդին մէջ... Չարացա՞ծ, թե՛ բարիացած մտքեր... գիրար կը դարպասեն:

Տարօրինակ տխրութիւնն ու վիշտը զիս ալ կը համակեն, կը սկսիմ լալ: Անոնց չապրուած, կիսատ մնացած կեանքերն ու սերերը, կարօտները, իմս կը դառնան կարծես ու ես կը մնամ անօգնական: Տակաւին երէկ կային, ինծի պէս սովորական կեանքով կ'ապրէին՝ բնաւ իրենց մտքերէն չանցնելով, թէ այսօր պատմութեան ետեւ զացող սլաքին գիրկն ու կողմը պիտի անցնէին: Բայց անոնց մայրերէն ոչ մէկը իմ միսիթաբութեանս կարիքը ունի, ո՛չ կարեկցանքի, ո՛չ ալ արգահատանքի. անոնց մայրերուն ոչ մէկ բան կրնայ օգնել՝ ո՛չ սրտի խորերէն եկած բառեր, ո՛չ ալ սովորաբար արտասանուած, հոգիի լուսաւորութեան կրկնուած խօսքեր... ինչ դիրքին է թուղթին փոխանցել որեւէ միտք որ դուն չես ապրած, չես տառապած կամ մեռած անոր համար: Բայց ահա ապակիէն անդին ողբն ու տառապանքը կը համակեն քաղաքին կեդրոնական փողոցները, սուգի թափօրները կը յաջորդեն իրարու... Ես հիմա կը հետեւիմ անոնց, կը ճանապարհեմ անոնց յիշատակը, ետքը ամէն բան կրկին մոռացութեան կը տրուի ու կը հալի ցաւէն սմբած քաղաքին առօրեայ անցուդարձին մէջ, բայց անոնց տան ձեղուններուն տակ անշեջ կրակներ՝ մայրական սիրտեր, ճարճատող խորոյկ... որքա՞ն կը շարունակեն դիմանալ, այդ միայն Աստուծոյ յայտնի կրնայ ըլլալ:

Ես չեմ գիտեր, թէ երբեւէ կը հանդիպիմ այս մայրերուն, արդեօք ի՞նչ լեզուով պէտք է խօսիլ անոնց հետ՝ ա՛լ աւելի ցաւ չպատճառելու համար: Աշխարհին նայող անոնց աչքերով երբեք պիտի չուզէիք նայիլ, եւ Աստուած չընէ, որ ոչ մէկ մայր նայի այդ աչքերով: Արդեօք քաղաքի փողոցները պատասխան ունի՞ն տալու, զեթ միսիթաբութեան խօսք մը, թէ ոչ միակ անկարողը ես եմ... որ հիմա ոչ միայն տանս, այլ ամբողջ քաղաքին մէջ առանձին եղերամա՛յր եմ, թե՛ բու...

ն՝վ ինծի այս իրաւասութիւնը տուաւ՝ մարդոց ճանապարհելու, ճամբայ դնելու դէպի ուրիշ հարթութիւն... թէ ոչ իմ իսկ ճամբորդութեանս պատրաստութիւնն է, որ կը սկսիմ, ինչպէս այստեղ ապրող ամէն ոք...

Ուրկե՞ դէպի ո՛ւր, անյայտ տարածութիւններ, անընդհատ կը շարունակուի կրակոցը... փամփուշտները բոլորն ալ ունին իրենց նշաւակները:

Մարսափ յառաջացող փամփուշտներ՝ ինչը՞, ո՞վ կամ ո՞ւր կը գտնեն իրենց թիրախ...

Բոլորն ալ կ'ուզեն խուսափիլ կեանքին վերջը սահմանող անագորոյն փամփուշտէն, կամ՝ հրթիռէն:

Տարին սկսաւ երիտասարդ կորուստներու ցաւով, նախ՝ Գիւմրիի անասելի ողբը, ընտանիք մը ամբողջ ծաղկեփունջի մը պէս արմատախիլ եղաւ, անիմաստօրէն եւ անհասկնալի պատճառներով խամրեցաւ: Ետքը հայրենի սահմաններուն վրայ, մէկիկ մէկիկ, ողկոյզներուն վրայէն գետին ինկող ճիւղերու պէս, մեր ոսկի տղաքը, չերիտասարդացած, աղուամագով՝ դեռ պատանի, իւրաքանչիւրը գերդաստանի մը ապագայ սին ըլլալու կոչուած՝ կոխկոտուեցաւ...

Յոգմերէն քշուած կարմիր կակաչներու կուտակուած թերթիկներով լեցուն ծոր մը կայ, եւ միայն այդ ծորին մէջ մոռցուած, բայց ամենատես ցուպն ու գաւազանը կրնան միսիթաբել եւ գիտնալ մեր բոլոր ինչոններուն պատասխանները:

Յարիւր եւ աւելի տարիներու վրայ երկարող կակաչները միաբերան իրենց կանչով կը փռուին նորերուն ճամբուն վրայ, արնակները մետաքսի պէս կը ջերմացնեն իրենց սիրով: «Կակաչներէն» արնակարմիր կանչով ու բառերով, ծայնակցելով նորերուն հետ կը գոչենք-հեռու մանգաղահունձ անողոք մահէն. կը հնծէ անխնայ, կը տարածուի դէպի հեռուներ, զգոյշ...

Կոչնակներուն ծայնը անզանգ ու ժանգոտած ահագանգի պէս կը դառնան համատարած ու խեղդող, մեր մեծ վիշտի հարիւրամեակի դեռ սկզբնաւորութեան:



## Սփիւռքի Նախարարութիւնը եւ Զայ Ոսկերիչներու Զիմնադրամը կը յայտարարեն կրթական դրամաշնորհային մրցոյթ

Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութիւնը Զայ Ոսկերիչներու հիմնադրամին (AJF) հետ համատեղ որոշած է կրթաթոշակ շնորհել հինգ հայ ուսանողներու՝ «Ազամանդի դասակարգին մէջ» մասնագիտութեամբ ուսանելու նպատակով:

2015թ. աշնան իրականացուող այս դասընթացի ծիրէն ներս Զայ Ոսկերիչներու Զիմնադրամին պիտի աջակցի Հայկական թանկարժէք քարերու գործանոցի-ակադեմիան (AGLA): Դասընթացը պիտի մեկնարկէ 2015թ. Սեպտեմբերին եւ պիտի ներառէ ազամանդի ուսումնասիրութեան բոլոր ուղղութիւնները:

Աւարտական քննութիւնները յաջողութեամբ յանձնելու պարագային շրջանաւարտները կը դառնան ազամանդի դասակարգման հաւաստագրուած փորձագետներ, ինչ որ թոյլ կու տայ անոնց շարունակելու գործունէութիւնը ոսկերչութեան եւ ազամանդագործութեան ոլորտին մէջ:

Դիմորդները պէտք է ըլլան հայ՝ առաջին կամ երկրորդ սերունդէն, նուիրուած ըլլան հայկական ավանդոյթներուն եւ սովորոյթներուն եւ հաւատարիմ մնան իրենց ժառանգութեան:

Փափաքողները պէտք է բաւարարեն AGLA-ի ընդունելութեան պահանջները: Անոնք պէտք է ներ-

կայացնեն լրացուած յայտը, երաշխաւորող նամակ ու ինքնակենսագրութիւն, եւ ուղարկեն այն Սփիւռքի Նախարարութեան Եւրոպայի հայ համայնքներու վարչութեան [europedep@yahoo.fr](mailto:europedep@yahoo.fr) էլ. հասցէին: Ուսուցումը, ինչպէս եւ ուսումնական ձեռնարկները հայերէն լեզուով են, ուստի հայերէնի իմացութիւնը պարտադիր է: Նախընտրելի է, որ դիմորդները ունենան ֆիզիքայի եւ քիմիայի տարրական գիտելիքներ: Տեսական դասաժամերը պիտի սկսին 18:00-ին, իսկ գործնական դասընթացները պիտի ընթանան ազատ ցուցակով: Դասընթացները ամէն օր են, բացի Շաբաթ, Կիրակի եւ տոնական օրերէն:

Յայտերու ու լրացուած փաստաթուղթերու յանձման վերջնաժամկետը 2015թ. Օգոստոս 30: Յայտի ձեւն ու պահանջները առկայ են առցանց, ինչպէս նաեւ կրնան ներկայացուիլ AJF-ի միջոցով: Առաջնութիւնը պիտի տրուի արժանի դիմորդներուն հետեւեալ համայնքներէն.

- Երեւան,
- ՀՀ մարզեր,
- Արցախ,
- Հայաստան բռնագաղթուած տւրիհայ համայնք,
- Սփիւռքահայ համայնքներ:
- Ուսումնական ծրագիրին մէջ ներառուած են՝
- Ազամանդի բնոյթն ու ազաման-

դագործներու չգրուած օրէնքները,

Ալմաստներու ֆիզիքա,

Ալմաստներու ֆիզիքական բնութագրերը,

Ալմաստներու բիւրեղաբանական համաչափութիւնը,

Ալմաստներու տեսողականը լօպտիկանլ,

Ալմաստներու գոյնն ու ատոր բնոյթը,

Ալմաստներու համադրութիւնը (HPHT, CVD),

Ալմաստներու կազմաւորումն ու հանքաարդիւնահանումը,

Ամփշակ ալմաստներու տեխնոլոգիական հանքաբանութիւնն ու դասակարգումը,

Ազամանդի դասակարգումը,

Արհեստական եւ ազնուացուած ազամանդներ:

AGLA կը գտնուի Հիւսիսային պողոտայի բիզնէս կեդրոնի 9-րդ յարկին մէջ՝ Հիւսիսային պողոտայ 1/31, Երեւան, Հայաստան, հեռ. (37410) 50-14-33:

Լրացուցիչ տեղեկութիւններ ստանալու համար կը խնդրենք դիմել Սփիւռքի Նախարարութեան Եւրոպայի հայ համայնքներու վարչութիւն հետեւեալ էլ. փոստով [europedep@yahoo.fr](mailto:europedep@yahoo.fr) կամ զանգահարել (37410) 58 56 01 (112) հեռախօսահամարով:

ՀՀ ՍՓԻՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## Անցեալ տարի Թուրքիոյ մէջ բռնութեան հետեւանքով 294 կին մեռած է

Թուրքիոյ Մարդու Իրաւունքներու Միութեան տուեալներուն, 2014ին երկրի մէջ տղամարդոց բռնութեան հետեւանքով 294 կիներ իրենց կեանքը կորսնցուցած են: Նշուեցաւ որ ամէն չորս ժամը անգամ մը կին մը սեռային շահագործումի կամ բռնութեան կ'ենթարկուի: Կիներու 38 տոկոսը իր կեանքի ընթացքին նուազագոյն անգամ մը ֆիզիքական կամ սեռային բռնութեան կ'ենթարկուի: Ըստ իրապարակուած տուեալներուն, բռնութեան ենթարկուած կիներու 89 տոկոսը, պետական որեւէ կառոյցի մօտ բողոք չի ներկայացներ:

2014ին երկրի մէջ այրերու կողմէ բռնութեան ենթարկուած են 575 կիներ, որոնցմէ 282ը բռնաբարութեան զոհ դարձած է: Վերջին տասնըհինգ տարիներու ընթացքին սեռային շահագործման համար դատեր բացուած են 241 ոստիկաններու, 91 զինուորականներու, ոստիկան զօրաց 17 պաշտօնեայի, պետական պահպանութեան 15 ծառայողի ու 45 բանուորներու դէմ, սակայն անոնցմէ ոչ մէկը դատապարտուած կամ պատժուած է:

Անդրադառնալով այս թեմային, երգիծահանդէսներ սկսած են բաւական ծանր վերտառութիւններով ծաղրանկարներ հրատարակել:

(Սարմարա)

# Մահճուպեան. «Չայ-Թրքական կապերու կարգաւորման համար՝ Արցախի տագնապին փաթեթային լուծում պէտք է»

Թուրքիոյ վարչապետի գլխաւոր խորհրդական Էթիէն Մահճուպեան «Արդար յիշողութիւն» նախաձեռնութեան տուած իր հարցազրոյցին մէջ անդրադարձած է իր պաշտօնին, Յեղասպանութեան 100-ամեակին ակնկալուող հաւանական զարգացումներուն, Ապրիլ 24-ին Կալիփոլիի տօնակատարութիւններուն, ինչպէս նաեւ՝ հայ-թրքական յարաբերութիւններուն:



անոր հանդէպ, պիտի չփոխուեր», ըսած է ան:

Պատասխանելով Թուրքիոյ այդ օրերու վարչապետ Ռեճեփ Թայ-յիփ Երտողանի կողմէ հայերուն

ուղղուած ցաւակցական ուղերձի անկեղծութեան մասին հարցումի մը՝ Էթիէն ըսած է. «Ցաւակցական ուղերձի անկեղծութիւնը բացայայտ էր: Գոյութիւն ունի իսլամական զգայուն պետութիւն մը, որ կը կանգնի ճշունակներու կողքին: Այս պահուն, օրինակ, Թուրքիոյ մէջ կայ մօտաւորապէս 2 միլիոն սուրիացի գաղթական, ներառեալ՝ հայեր, քրիստոնէաներ, քիւրտեր», յիշեցնելով նաեւ հիմնադրամներուն պատկանած գոյքը վերադարձնելու մասին իշխող կուսակցութեան որոշումները:

Անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններուն՝ ան նշած է, թէ իր կարծիքով՝ այդ առումով Թուրքիան փորձած է քայլեր առնել՝ «հին կապանքներէն ազատելու համար, սակայն, անշուշտ, միջպետական յարաբերութիւնները շտկելը այդքան ալ դիւրին չէ», անելցնելով, որ քայլերը պէտք է երկկող-

մանի ըլլան: Ան նաեւ նշած է, թէ այդ հարցը բաւական բարդացած է՝ Ղարաբաղի հարցին պատճառով:

«Այդ պատճառով ալ, կարելի չէ զայն կարճ ժամանակահատուածի մը ընթացքին լուծել: Միաժամանակ, պէտք է բացուի հայ-թրքական սահմանը, իսկ Ղարաբաղի հարցը՝ Չայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ, լուծման փուլի պէտք է հասնի, եւ նոյն ժամանակ, երեք երկիրներուն միջեւ նոր յարաբերութիւններ պէտք է հաստատուին: Այսինքն՝ բոլոր այդ խնդիրները նոյն պահուն լուծելու համար, փաթեթային լուծում մը անհրաժեշտ է», ըսած է ան:

Մահճուպեան յոյս յայտնած է, որ Ապրիլ 24-էն ետք հայ-թրքական յարաբերութիւնները աւելի հանգիստ հարթութիւն կը տեղափոխուին:

## Հաղորդագրութիւն...

Շար. էջ 5-էն

Անդրադառնալով ետք Օսմանեան կայսրութեան հայաջինջ քաղաքականութեան՝ ան շեշտեց, որ պէտք չէ վախնալ անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ այնուհետեւ բան չեն կրնար ընել: Իր արաբներէն խօսքի աւարտին հայր Մուրատեան շնորհակալութեան խօսք ուղղեց Լիբանանի պետութեան, ժողովուրդին, երկրին եւ Չայաստանի Հանրապետութեան:

Ապա յանուն Չայոց Տեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի կեդրոնական մարմինին, ֆրանսերէնով խօսք առաւ Ռաֆայել Ումուտեան, ապա առաջին նստավայրը՝ Սեդա Խտըշեան, բացուած յայտարարեց նիստը եւ Չայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարար Հրաչ Յակոբեանի կենդանի ողջոյնը հեռասփռուեցաւ, որմէ ետք գիտաժողովի առաջին զեկուցումը ներկայացուց ցեղասպանագետ, Չայոց Տեղասպանութեան մասնագետ դոկտ. Յարութիւն Գեորգեան:

Փրոֆ. Յարութիւն Գեորգեան ծանրացաւ Չայոց Տեղասպանութեան վերաբերեալ օտար դիւանագիտական առաքելութիւններու եւ միսիոնարներու արխիւային փաստաթուղթերուն վրայ: Ան անդրադարձաւ եւրոպական արխիւներուն, առանձնացուց գերմանական, անտրո-հունգարական, ամերիկեան, ֆրանսական եւ բրիտանական, միսիոներական եւ Պոլսոյ հայոց պատրիարքութենէն Երուսաղէմի հայոց պատրիարքութիւն փոխանցուած արխիւները:

Երկրորդ զեկուցումը ի բացակայութեան զեկուցաբերի ներկայացուցեցաւ: Չեկուցումը անդրադարձաւ Վատիկանի արխիւներուն՝ Չայոց Տեղասպանութեան վերաբերեալ: Չեկուցումը գրեթէ ամբողջութեամբ կեդրոնացած էր 1894-1896 շրջանի համիտեան ջարդերուն վրայ:

Իւրաքանչիւր զեկուցումէ ետք առիթ տրուեցաւ հարց-պատասխանի ու քննարկումներու, որոնք լուսաբանական յստակացումներու եւ յաւելեալ տուեալներու տեղի տուին:

Կէսօրուան ճաշի դադարէն ետք Դամասկոսի Չայոց Տեղասպանութեան 100-ամեակի մարմինի նախագահ Արմաշ Եպս. Նալպանտեան ներկայացուց Դամասկոսի հայ համայնքին ծրագրած եւ արդէն մասամբ գործադրուած 100-ամեակի փաթեթը:

Նման բնոյթի զեկուցում մը ներկայացուցին նաեւ Չայոց Տեղասպանութեան 100-ամեակի Եգիպտոսի ներկայացուցիչներ դոկտ. Արմէն Մազլումեան եւ Պերճ Թերգեան՝ յառաջացնելով մասնակի համապատկեր մը Միջին Արեւելքի մէջ կատարուող եւ կատարուելիք ձեռնարկներուն: Ապա խօսք առաւ փրոֆ. Վահրամ Շեմմեսեան:

Իր զեկուցումին մէջ, դոկտ. փրոֆ. Վահրամ Շեմմեսեան անդրադարձաւ Միջին Արեւելքի հայկական արխիւատուներուն: Ան մէկ առ մէկ թուարկեց Միջին Արեւելքի հայկական այն վայրերը, արխիւատուները, ուր ինք անձամբ պրպտումներ կատարած է Չայոց Տեղասպանութեան առնչութեամբ եւ առանձնացուց Գահիրէի, Երուսաղէմի հայոց պատրիարքութեան, Անթիլիասի Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան, Հալէպի եւ Պաղտատի հայ առաքելական առաջնորդարաններու արխիւատուներուն մէջ պահ դրուած Չայոց Տեղասպանութեան տարիներուն եւ յաջորդող տասնամեակներուն վերաբերող փաստագրական մեծ եւ արժէքաւոր հաւաքածոները:

Փրոֆ. Շեմմեսեան կարեւոր նկատեց այդ արխիւային նիւթերուն մշակումը, թուայնացումը եւ անոնց բազմացումն ու տարբեր կեդրոններու մէջ պատճեններու առկայութիւնը: Ան նշեց, որ այդ նիւթերը անհրաժեշտ է մատչելի դարձնել պատմաբաններուն, ուսումնասիրներուն, որպէսզի կարելի դառնայ աւելի ամբողջականօրէն սերտել Չայոց Տեղասպանութիւնը, անոր գործած աւերը եւ հայ ժողովուրդին վրայ ունեցած հետեւանքները:

Դադարէն ետք իր զեկուցումը ներկայացուց Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագիրներու հիմնարկի՝ Մատենադարանի վաստակաւոր գիտաշխատող Գեորգ Տէր Վարդանեան. ան ներկայացուց Չայոց Տեղասպանութեան պատճառով կորստեան մատնուած հայկական մշակութային գանձերէն ձեռագիր մատեաններուն եւ կրօնական գիրքերուն մասին տեղեկութիւններ:

Դոկտ. Տէր Վարդանեան ընդգծեց, որ շատ փոքր թիւով ձեռագիր մատեաններ փրկուած են Արեւմտեան Չայաստանէն եւ Կիլիկիայէն: Ան ընդհանուր կորուստը հաշուեց շուրջ 30,000 ձեռագիր մատեան: Յարգելի մասնագետը շեշտեց եւ մեծապէս հաւանական նկատեց, որ Չայոց Տեղասպանութեան օրերուն Արեւմտահայաստանի ու Կիլիկիոյ վանքերէն ու եկեղեցիներէն բռնագրաւուած ձեռագիրներէն մաս մը կը գտնուի տակաւին թրքական պետական գրադարաններու կամ արխիւատուներու փակ ֆոնտերուն մէջ, որոնց լոյս աշխարհ բերումը մեծ նպաստ կ'ունենայ հայ մշակոյթի ձեռագիր մատեաններու մարզի ուսումնասիրութեան մէջ, բայց միաժամանակ ծանր յանցագործութեան աթոռին կը գամէ ցեղասպան թուրքը:

Դոկտ. Տէր Վարդանեան յստակացուց նաեւ, որ եթէ որոշ պատկերացում մը կայ այս ձեռագիր մատեաններուն կորուստի քանակին եւ արժէքին մասին, անկարելի է սակայն գնահատում կատարել հայ կրօնական սպասքի, եկեղեցական իրերու կորուստին քանակին, համեմատութեան

եւ արժէքին մասին:

Գիտաժողովի վերջին զեկուցողը եղաւ գեր-յարգելի հայր Անդրանիկ Ծ. վրդ. Կռանեան, որ ներկայացուց Մարտինի հայ կաթողիկէ առաջնորդ Իգնատիոս արք. Մալոյեանի կեանքը եւ անոր նահատակութեան շուրջ մտորումները:

Միօրեայ այս գիտաժողովը յատկանշուեցաւ այն հաւաստումով, որ տակաւին չուսումնասիրուած եւ չպեղուած մեծաքանակ արխիւային նիւթեր կան, որոնց գոյութեան քաջատեղեակ են Տեղասպանութիւնը ուսումնասիրողները: Միւս կողմէ, սակայն, նշուեցաւ, որ կան տակաւին չուսումնասիրուած-չայտնաբերուած արխիւներ եւս: Այս բոլորը առաւել լոյս կը սփռեն Չայոց Տեղասպանութեան ծալքերուն վրայ: Բարձրաձայնուեցաւ այն միտքը, որ հայ ժողովուրդը իբրեւ ազգ կը գտնուի եական մարտահրաւերի մը առջեւ, որ կը վերաբերի պատասխանատու եւ գիտակից վերաբերում ունենալու իր պատմութեան վաւերաթուղթերուն եւ արխիւային նիւթերուն հանդէպ, եթէ կը նպատակադրէ իր պատմութեան ուսումնասիրութիւնը նոր հանգրուանի եւ միջազգային նորագոյն չափանիշերուն համապատասխանեցնել:

Կարեւոր նկատուեցան նաեւ արխիւային նիւթերու գիտական մատչելիութեան, թուայնացման, կրկնօրինակման եւ այլեւայլ կեդրոններու մէջ ցանցակալելու խնդիրները:

Այս խնդիրին իբրեւ այլ երեսակ ընդգծուեցաւ նաեւ նոր, երիտասարդ մասնագետներու յառաջացումը եւ անոնց անհրաժեշտ թափ ու աջակցութիւն ցոյց տալու եականութիւնը, որովհետեւ կարիքը կայ ո՛չ միայն Տեղասպանութեան առաջին տարիներու արխիւային նիւթերու առաւել ուսումնասիրութեան, այլեւ գաղթականութեան տեղաւորման, քեմփերու եւ որբանոցներու հաստատման պատմութեան ուսումնասիրութեան:

Գիտաժողովը նաեւ ուղղակի եւ անուղղակի կոչ էր երիտասարդ գիտնականներուն եւ ուսումնասիրողներուն՝ աւելի մեծ թափով լծուելու մարդկային հաւաքականութեան մը կողմէ մարդկային այլ հաւաքականութեան դէմ գործուած ցեղասպանութեան առաւել ամբողջական ուսումնասիրութեան թափը եւ կշռոյթը զօրացնելու: Գիտաժողովի իւրայատկութիւնն էր նաեւ այն, որ բազմակի քննարկումները յաճախ դիտակէտ ունեցան այս արխիւային բազմակի նիւթերու օգտագործումը՝ իրաւական դաշտին մէջ:

**ԶՄՍԱՌՈՒ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆԻ ԿՂԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

# Ամենայն Յայոց Կաթողիկոսը ցաւակցագիր յղած է Ղպտի եկեղեցւոյ Պատրիարքին

16 Փետրուար 2015-ին՝ Գարեգին Բ. Ամենայն Յայոց կաթողիկոսը ցաւակցական գիր յղած է Ղպտի ուղղափառ եկեղեցւոյ առաջնորդ Թաւատրոս Բ.ին՝ Լիպիոյ մէջ ահաբեկիչներու կողմէ քսանմէկ ղպտիներու սպանութեան համար:



Գերագոյն հոգեւոր խորհուրդի եւ Մայր Աթոռի միաբանութեան անունով ան վշտակցութիւն յայտնած է ղպտիներուն, Եգիպտոսի ժողովուրդին եւ սպաննուածներուն ընտանիքներուն:

Դատապարտելով կատարուած ոճրագործութիւնը՝ Ամենայն Յայոց հայրապետը կոչ ուղղած է միջազգային հանրութեան՝ առաւել ջանքեր գործադրելու Միջին Արեւելքի մէջ արդարութեան եւ համերաշխութեան հաստատման համար, որպէսզի բացառուին բռնութիւնները այն շրջաններուն մէջ, ուր քրիստոնէաներն ու իսլամները դարեր շարունակ կ'ապրին խաղաղութեան եւ ներդաշնակութեան մէջ:

# Իռլանդացիներ Լոնտոնին կոչ կ'ընեն իր մեծ հայրը Յայոց Յեղասպանութեան զոհ ճանչնալու

Հիւսիսային Իռլանդայէն 64-ամեայ Փոլ Մանուկը վստահ է, որ իր մեծհայրը սպաննուած եւ հողին յանձնուած է հայկական եղբայրական գերեզմանին մէջ: Տղամարդը բրիտանական եւ իռլանդական կառավարութիւններուն կոչ կ'ուղղէ ճանչնալու ցեղասպանութեան զոհերը: Այս մասին կը գրէ News.am-ը՝ վկայակոչելով «Coleraine Times»-ը:



Անոր խօսքով, շուրջ մէկ դար առաջ ժամանակակից Թուրքիոյ տարածքին մէջ գտնուող գիւղերէն մէկուն մէջ իր մեծհոր՝ Մանուկ Տիշչէքենեանին, այլ տղամարդոց հետ ներառած են շարասեան մէջ, եւ անկէ ետք անոնց ոեւէ մէկը չէ տեսած: Փոլ Մանուկի կարծիքով, անոնց ողբերգական ճակատագիր բաժին հասած է, կը գրէ armenian-genocide100.org -ը:

զինուոր եւ խաղաղութեան շարժման գործիչ Էդուարդ Յորկանն ալ յայտարարած է, որ Տուպիլի մէջ յատուկ խումբ մը ստեղծուած է՝ այս հարցը աշխուժօրէն բարձրացնելու համար:

«Ես կը զգամ, որ օսմանեան զինուորները բոլորին սպանած են ու թաղած եղբայրական գերեզմաններուն մէջ», - ըսած է Փոլ:

Փոլ կ'ենթադրէ, որ Մեծ Բրիտանիան Յայոց Յեղասպանութեան թեմային չի ցանկար անդրադառնալ աշխարհաբաղաբական նկատառումներէն ելլելով: «Իսկ իռլանտան, ամենայն հաւանականութեամբ, կը հետեւի Լոնտոնի օրինակին, քանի որ այն փոքր երկիր է, եւ անոր Բրիտանիոյ հետ շատ բան կը կապէ», - ակնարկեց Փոլ Մանուկ:

Ան նաեւ ակնարկեց, որ իր մեծհայրը անմիջապէս հասկցած է ամէն ինչ ու որդիին եւ չորս դուստրերուն հետ փախած է գիւղէն: «Իմ հայրս վերապրած է ցեղասպանութիւնը: Ան 6 տարեկան եղած է, - նշած է ան:

Իռլանդայի մէջ ՄԱԿ-ի նախկին

# Թուրքիա Յեղասպանութեան հարցին կը կապէ հակաօդային պաշտպանութեան համակարգի մեծ պայմանագրի մը կնքումը

«Ալօս» կը հաղորդէ, որ Թուրքիա մէկ միլիառ տոլար արժողութեամբ հակաօդային պաշտպանութեան համակարգ գնելու դիմումը պիտի քննարկէ Ապրիլ 24-էն ետք: Այդ մէկը պայմանաւորուած է Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի կողմէ Յայոց Յեղասպանութեան 100-ամեակին դրսեւորելիք կեցուածքով:

«Հիւրիյէթ Տէյի Նիուզ» կը հաղորդէ, որ Թուրքիան այդ հարցին մէջ որոշում պիտի կայացնէ հիմնուելով Յեղասպանութեան հարցին վերաբերեալ Միացեալ Նահանգներու դիրքորոշումին վրայ:

Դիւանագիտական աղբիւր մը նշած է, որ Թուրքիա կը փափաքի վճիռ կայացնելէ առաջ Յայոց Յեղասպանութեան հարցին մէջ Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի դիրքորոշումը տեսնել:

Անգարա հակաօդային պաշտպանութեան համակարգեր տեղադրելու համար Սեպտեմբեր 2013-ին համաձայնութիւն գոյացուցած էր չինական ընկերութեան մը հետ, իսկ Նոյն հարցին վերաբերեալ Արեւմուտքին հետ զուգահեռ բանակցութիւններ սկսած է վարել անցեալ տարուան:

# Թորոնթոյի միջ-...

Շար. էջ 3-էն

Թորոնթոյի «Նայիրի» երգչախումբը ղեկավարութեամբ պրն. Սարգիս Յամպոյեանի երգեց «Նորահրաշ պսակաւոր» շարականը ժողովուրդին մասնակցութեամբ, «Կարմիր Վարդան» եւ «Լեւոն ամպերը», մենակատարութեամբ Մովսէս Յայիթեանի եւ ընկերակցութեամբ երգչախումբին, դաշնակի ընկերակցութեամբ Սօնա Յովսէփեանի: Փոքրիկն Յայկ Մարտոյեան եռանդով ու ապրումով արտասանեց ժազ Յակոբեանի «Յիսուսամարտ»ը, խոստումնալից երիտասարդ Արագ Թոփճեան, ճարտա-

թիւնը նշանակած են Բուն Բարեկենդանէն քանի մը օրեր առաջ, որպէսզի մեզի զօրացնեն, նախքան Մեծ Պահք մուտք գործելը, ինչպէս որ Վարդանանք պատերազմեցան չարին դէմ, Յակոբեանին դէմ, պահպանելով իրենց հաւատքը, այնպէս ալ սիրելիներ, մենք նաեւ ունինք հոգեւոր պատերազմ, հաւատքի պատերազմ:»

Յայր Սուրբը իր խօսքերը վերջացուց ըսելով.

«Թող Աստուած Վարդանանց ոգին ու մեր 100-ամեայ Յայոց Յեղասպանութեան Նահատակներու արեան ի խնդիր, մեզ առաւել եւս զօրացնէ, մեր հաւատքին մէջ ամրացնէ ու մեր ազգային պատկանելիութեան ոգին առաւել եւս մեր



որեն ջուրակի վրայ նուագեց, «Լեւոն ամպերը» եւ Շոբէնի «Noc-turne 20»ը: Միջ յարանուանական յանձնախումբի ատենապետ՝ Յակոբ Գանապեան ներկայացուց օրուայ բանախօսը՝ Ս. Աստուածածին հայր. Առաք. Եկեղեցւոյ հովիւ՝ Յոգ. Ս. Ստեփանոս վրդ. Փաշայեանը ու հրաւիրեց Յայր Սուրբը իր պատգամը փոխանցելու ներկաներուն:

մէջ դրոշմէ:» Ներկաները ծափահարութիւններով գնահատեցին հայր Ստեփանոս վարդապետի բանախօսութիւնը:

Այս Տեր Զարեհ Ա. քիւյ. Զարգարեան իր փակման խօսքին մէջ, ներկաները հրաւիրեց նորոգելու Վարդանանց ուխտը, շնորհաւորեց հոգեւորականաց դասը, Սրբոց Ղեւոնդեանց տօնին առթիւ ինչպէս նաեւ հիւրընկալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու հոգաբարձութիւնը եւ Տիկնանց Միութիւնը, շնորհաւորեց սոյն ձեռնարկը կազմակերպող միջ-յարանուանական մարմնի համագործակցութիւնը, ինչպէս նաեւ օրուայ բանախօս հայր Ստեփանոս վարդապետի խորիմաստ խօսքերը, գեղարուեստական յայտագրի մաս կազմող «Նայիրի» երգչախումբը, երիտասարդ արուեստագետ Արագ Թոփճեանն ու փոքրիկն Յայկ Մարտոյեանը:

Գերյ. Յայր Եղիա Ծ. վրդ. Գիրեճեանի պահպանիչով եւ Տերունական աղօթքի երգեցողութեամբ ձեռնարկը իր աւարտին հասաւ, որմէ ետք Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

# Մուրատ Եթէնի ուշագրաւ...

Շար. էջ 11-էն

Նոյնը կարելի չէ ըսել թրքական կողմի համար:

Այնուհետեւ յօդուածագիրը դիտել կու տայ որ «Զոնկրեսի մէջ հայկական հարցին նպաստող որեւէ քայլ տասնամեակներ շարունակ կը խոչընդոտեր հրեական լոպիս, որ դժբախտաբար այլեւս նմանօրինակ պատրաստակամութիւն չունի, ինչ որ պայմանաւորուած է Իսրայելի նկատմամբ Երտոզանի վարած քաղաքականութեամբ:»

Եթէն կը կանխատեսէ որ այս տարի թրքական կողմը պիտի չստանայ նաեւ յունական ու կարգ մը արաբական երկիրներու լոպիսներու աջակցութիւնը:

«Կը թուի թէ Անգարա «շանս» չունի Ուաշինկթընի դէմ ռազմավարական խաղաթուղջ ներկայացնելու, որպէսզի կարենայ համոզել Պարաթ Օպաման այն հարցի մէջ թէ այս անգամ Սպիտակ Տան համար մեծ օգուտ պիտի ըլլայ ընթացք չտալ հայկական հարցին», կ'եզրակացնէ Մուրատ Եթէն:

(Մարմարա)



ՔԱՄ ՄԵՐ ՄԿՐՏՅԵՆ ԹԱՏԵՐՆԻՈՒՄԻՐ  
TCA MHER MEGERDCHIAN THEATRICAL GROUP

# ՊԱՏԱՐԱՆ Է, ՈՏՔԻ...

WRITTEN BY  
PERCH ZEYTUNTSYAN  
ADAPTED & DIRECTED BY  
GERALD PAPASIAN

*ALL RISE  
THE COURT IS  
IN SESSION*

**SUNDAY  
APRIL 12**  
SYMPHONY SPACE  
NEW YORK CITY

**\$35 - \$50**

PERFORMED IN ARMENIAN  
WITH ENGLISH SUBTITLES

www.symphonyspace.org

# ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ARMENIAN GENOCIDE

## 24.04.15

AT **12:00** -ին

### ՄԻԱՍԻՆ TOGETHER!



The Armenian Genocide Centennial Committee of Canada  
Comité Canadien du Centenaire du Génocide des Arméniens  
Հայկական Ցեղասպանության Հարիւրամեակի Գանադայի Մարմին

OTTAWA

## ԱՄՆ պիտի մարզէ Սուրիոյ չափաւորական ընդդիմադիրները

Վերջերս Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնած է, թէ Սուրիոյ չափաւորական ընդդիմութեան անդամ 1500 զինեալներ յատուկ մարզումներ պիտի ստանան:

Հաղորդագրութեան մէջ չի նշուիր մարզումներուն կեդրոնատեղին եւ կ'ըսուի նաեւ, որ ԱՄՆ տարեկան կտրուածքով Սուրիացի 5 հազար զինեալներ պիտի մարզէ: Ըստ աղբիւրին, մարզուած զինեալներուն զխաւոր առաքելութիւնը պիտի ըլլայ Տահէշի դէմ պատերազմիլը:

## Յրանդ Տինքի ընտանիքի փաստաբանէն նոր դիմումնագիր

*«Պէտք է հարցաքննուի նաեւ այդ շրջանի Տրապիզոնի Ապահովութեան Տնօրէնութեան Լրաբաղութեան բաժնի տնօրէն Էնկին Տինչ»*

Յրանդ Տինքի սպանութեան դատավարութեան անվերջանալի հանգըրուանի ընթացքին պետական անհամար բարձրաստիճան պաշտօնեաներ հարցաքննուեցան դատարանին ու ապահովութեան տնօրէնութեան պատասխանատուներուն կողմէ, բայց ինչպէս գիտենք, այս բոլորէն տակաւին դուրս չէ եկած կամ չէ հրապարակուած շօշափելի արդիւնք մը, բացի անկէ՝ որ բաներ մը կը պահուին հանրային կարծիքէն կամ կան շրջանակներ որոնք չեն ուզեր որ բաներ մը հրապարակուին այս նիւթի շուրջ:

Յրանդ Տինքի ընտանիքի փաստաբան Հաբան Պաքըրճօղլու այսօրերուն նոր անուն մը դրաւ հրապարակին վրայ ու պահանջեց որ ան ալ հարցաքննուի, քանի որ մինչեւ հիմա չէ հարցաքննուած: Այս անձն է այդ շրջանի Տրապիզոնի Նահանգային Ապահովութեան Տնօրէնութեան Լրաբաղութեան Բաժնի Նախագահ Էնկին Տինչը: Փաստաբան Հաբան Պաքըրճօղլու, դատախազութեան յանձնեց դիմումնագիր մը, որու մէջ դիտել տուաւ որ վերոյիշեալ անձն ալ առաջին կարգի պատասխանատուութիւն ունի Յրանդ Տինքի սպանութեան արգելք չըլլալու խնդրին մէջ:

Սի-էն-էն-ի հաղորդումին համաձայն, փաստաբանը դատախազութեան յանձնեց 7 էջերէ բաղկացեալ

դիմումնագիր մը, ուր դիտել կը տրուի որ Էնկին Տինչ 26 Օգոստոս 2001 թուականէն մինչեւ 28 Օգոստոս 2006 այսպիսի նուրբ ու պատասխանատու պաշտօնի մը վրայ գտնուած է, ուստի առաջնակարգ պատասխանատուութիւն ունեցողներէն մէկն է:

Դիմումնագրին մէջ փաստաբանը յիշեցուց, որ Իսթանպուլի Կուսակալութեան պաշտօնատարներն ալ, գիտնալով հանդերձ թէ Յրանդ Տինքի դէմ սպառնալիքներ կային ու անոր կեանքը վտանգուած էր, ոճ-րին արգելք ըլլալու որեւէ միջոցի չդիմեցին: Նոյնպէս, Տրապիզոնի Նահանգային Ոստիկան 20-րանց Յրամանատարութիւնն ու Տրապիզոնի Ապահովութեան Տնօրէնութիւնը գիտէին որ սպանութիւն պիտի կատարուի, բայց որեւէ գործողութիւն չկատարեցին սպանող կազմակերպող մարմինն դէմ:

Յրանդ Տինքի ընտանիքի փաստաբանը իր դիմումնագրի վերջաւորութեան մէկ առ մէկ կը յիշէ բոլոր այն պետական պաշտօնեաները, որոնք ցարդ հարցաքննուեցան, յետոյ կ'աւելցնէ որ ասոր փոխարէն Էնկին Տինչ մինչեւ այսօր չհարցաքննուեցաւ: Կը պահանջուի որ ան ալ հարցաքննուի պատկան իշխանութիւններու կողմէ:

«Մարմարա»



## Komitas

SALON FUNÉRAIRE  
ԹԱՂԱՏԱԿԱՆ ՄՊԱՍՏԿՈՒԹԻՒՆ

Funéraise Traditionnel  
Monument  
Pré-arrangement

5180, rue Salaberry  
Montréal, Québec H4J 1J3  
Tél. : 514 331-0400

www.komitas.ca

## Սկսած է գործել Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած կայքը

Յունուար 30-ին սկսաւ գործել Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նախաձեռնութիւններուն նուիրուած պաշտօնական կայքը՝ Armenian genocide100.org-ը:

Անկա պատրաստուած է Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած նախաձեռնութիւնները համակարգող պետական յանձնաժողովին որոշումով:

Կայքը հասանելի է երեք լեզուներով՝ հայերէն, ռուսերէն եւ անգլերէն:

Բաղկացած է քանի մը բաժիններէ՝ Ցեղասպանութիւն, ճանաչում, Պատմիր քո կեանքը, Նորութիւններ եւ Գրադարան: